



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material

Ա. ԳԵՎՈՂԵՑՅՈՒՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

Ա.

Ա. Ա.





Краснодарск. д-бръ физичкъ  
Директоръ Григоръ. 15/11 NOV 2011  
У. 4 б № 6 2 б 3 б 0.6.  
26 ноемвръ 1909г.

1524 NOV 2011

01 JAN 2009

$$\frac{1}{2}, \frac{2}{2}, \frac{3}{2}, \dots$$

ՀԱՅ-Ր Կ Ա Ր Կ Ա Վ Ե Կ Ա Խ Ա Ր Կ Ա Վ Ե Կ Ա Խ  
891.992-3 112

Q-65 <sup>u.s.</sup>




# ՊԱՏԿԵՐՆԵՐ

666

U.

~~Rivulus~~ ~~guttatus~~ ~~eggs~~



ԱԴՐԵՍԱԾՆԵՐԸ  
ՄԱՐԴԿԱՆՑ ՓՈԽԱՐՔՆ  
ՄԻՄԻԱՅՆ ՄԷԿԻ  
ՆՈՐ ՃԱՆԱՊԱՌՀԻՆ

ԲԱՐԱԿ  
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐԵ“  
1904.

17 MAR 2014

25.549

ՀՀ Ա Յ Ա  
2005 ԽԱԼ 10

ԳՐԱԴԱՐԱՆ

Дозволено цензурою. 3-го Июня 1904 года. г. Тифлисъ.

## Ա Պ Ա Ր Մ Ա Ծ Ն Ե Ր Ը

Ա.

Ո՞վ չէ սրտում մի թեթև շարժում, մի ուրախ թրթիռ զգում,  
երբ երկարատես մառախլապատ օրերից յետոյ առաւտեան առաջին  
անգամ վառ արշալյոն է նրա դիմացը ելնում ոսկի ժպիտով։ Նշա-  
նաւոր է լինում մահաւանդ այդ փոփոխաթիւնն այն ժամանակ,  
երբ վառ առաւտօր յաջորդած է լինում գիշերուայ հուժկու որոտին,  
շանթող կայծակին և յորդ, մինչև երկիրի ուղը ծծուող հեղեղին.—օղը  
ջինչ, գետինը լուացուած, աներն ու պարտէղները կարծես բնու-  
թեան աւագանում սրբուած, մաքրուած։ Աշխարհը նոր ծնած է  
թւում։ իրեն նոր է զգում և մարդը, մահաւանդ հոգսերի տակ  
ճնշուած աղքատ ու թշուառ մարդը, որին նորածին արել երկնքից  
նոր բարիք է բերել.—«Յոյս, յոյս», կանշում է վարդագոյն շողերից  
բարձրացող արեգակը, որին պատասխանում է խեղճ մարդը «գալիս եմ,  
գալիս։ Զէ, շենք մեռնիլ մեծ է Սսուուծոյ ողորմութիւնը»։

Այդպիսի մի առաւօտ էր բացուել և Շուշանի համար։ Երկար  
ժամանակ թուլսպ էր պատել նրա մարմինն ու հոգին. գործ չկար,  
անից դուրս գալի անհնարին էր։ Բայց ահա երկար ժամանտկ  
փակուած մնալուց յետոյ նա տեսնում է արեի շողը, բանում է գուռը,  
լոյս է թափանցում այնտեղ. շուտով մի մարդ էլ մօատենում է նրա  
շէմքին և նրան գործի կանչում։ լուացրի պէտք է գնալ։ Օ՛, ինչ  
ցնծութիւն, մի քանի օր զրանով նա կը փակէ սովի։ այդ սոսկալի  
հրէշի բերանը։ Այդ հանգամանքը մոռացնել էր տուել նրան գիշե-  
րուայ կայծակը, որ սարսափելի ճիւազի նման ներս էր սողում մթան  
միջով նրա բաց պատուհաններից և ընկնում որբերի գալուկ գէմքե-  
րին, կարծես հանգստութեան ժամին անգամ կամինալով ցոյց տալ  
այդ խրճիթի խեղճութիւնը։ նա մոռացել էր փոքրիկ, բայց ահարե-  
կող ճայթիւնները, որոնց միջոցին թւում էր թէ խարիսուլ տանիքը  
փուլ է գալիս ողօրմելի որբերի գլխին, որոնք նրա կեանքի միակ  
յենակէտն էին կազմում։ Մոռացել էր... բայց ոչ. Վահանի զլիա-  
վերեռում զրուած սկ գաւաթը վերադարձեց գիշերուայ սկ պատկերը.

գաւաթը լիքն է ջրով, գեղին, ժանգոտած ու զզուելի ջրով. գիշերուայ բոլոր գաղութիւնը խոնաւ խիւղի բոլոր անկիւններից կարծես հաւաքուել էր նրա մէջ, թէ այս ու այն անկիւնում դարձեալ ջրահետեր էին երևում, նոյնպէս դեղին, նոյնպէս զզուելի: Դա անձրեի ջուրն էր, որ գիշերը ծծուել էր ծակծակոտ կտրով և այդ խեղճերի մօտ էր գաել իւր ապաստարանը, իւր կանգնման տեղը:

Արել իւր խտաղիչ ձաւագայթները բաց պատուհանների միջով շուտով հասցեց մինչև բաց խրճիթի հեռաւոր անկիւնները, ուր քնած էին երեխանները: Բոլորն էլ արթնացան և ոտքի ելան:

—Տեսնո՞ւմ ես, Վահան, որքան հրաշալի օք է,—ասաց մայրը մեծ որդուն:

—Իսկ գիշերուայ զռո փոթորիկը, մայրիկ: Ես վախենում էի շարժուել. ինձ թւում էր, թէ շուտով կոճ ու գերան կը վուլուին մեր գլխին: Բայց ահա արել:

Ու նրա սիրուն աշքերն ընկան այն փոքրիկ ոսկեգօծ գնդակին, որ ամբողջ երկրին կենդանութիւն է ատլիս արհամարհելով որոսի և կայծակի սպասնացող ոյժը: Սյդ միջոցին նրա փոքրիկ հոգին հարցնում էր իրեն. «Միթէ թշուառութիւնն էլ նոյն վախճանը չի ունենալ»:

—Տես, որդիս, մեր խեղճութիւնն էլ այսպէս վերջ կունենայ: Ահա սուրբ առաւօտին ինձ համար գործ է բացուել. Թառլանենք լուացքի են կանչել ինձ. բայց մինչև երեկոյ հաց շունենք ուտելու. փող էլ գիտես չեն տալիս: Թող Տիգրանն ու Հռիփսիկը բարձրանան կտուրը ամրացնեն, իսկ դու... դարձեալ գնան...

—Նի, մայրիկ.—ասաց Վահանը հառաչելով, առանց խօսքը վերջացնելու:

Ամեն անգամ, երբ այդ առաջարկութիւնն անում էին նրան, կարծես մի ծանր քար էին ձգում մէջքին: Աշխատել, քստինել, ամբողջ օրն յսգնել ու չանգստանալ յօժար էր փոքրիկ երեխան: Եւ նա աշխատում էր, փուրս փշում դարբնի մօտ շարաթական 50 կոպէկ վարձով: Բայց ինչ փող էր դա ամնի բանից զուրկ մի ընտանիքի համար: Եւ ահա մայրը նրան ուղարկում էր—«Պնա՛»: Սյդ խօսքը շատ բան էր պարունակում իւր մէջ Վահանի համար—մի ամբողջ զործողութիւն յանցանիք չափ ծանր, խղճի խայթոցի չափ ճնշող:

—Մայրիկ,—ասում էր նա վիզը ծուած, կարծես խնդրելիս լինէր գառն բաժակը հեռացնել, որի համար պատրաստ էր տալ ամեն բան—ոյժ, արին, մարմին...

—Ի՞նչ անենք, սիրելիս, յիշո՞ւմ ես, մէկ մի ամիս առաջ ես դնացել:

—Մայրիկ, այս անգամ թող Տիգրանը...

—Ախ, Վահան, որ չես հասկանում... Ախը մեծը դու ես... քեզ տալի են... դու, դու սիրուն ես, քեզ չեն մերժում...

Այս խօսքերը խեղճ մօր աշքերից արցունք խլեցին, որ դուքս ցայտելով ցած զլորուեց նիհար այտերի վրայով. նա կռացաւ և երեսը ծածկեց փոքրիկի կրծքի վրայ:

—Գհամ,—ասաց Վահանը հեկեկալով և վերցրեց պարկն ու փոքրիկ մահակը:

—Չատ բեր, Վահան,—կանչեց նրա ետևից փարսիկ չուիփսիկը թոթովալով.—շատ բեր, որ մայրիկը կրկին չուզարկի:

«Աւելի լաւ է մեռնել, քան ձեւք մեկնել և դատարկ յետ քաշել մերժուած, ամօթահապ»,—մտածում էր Վահանը ճանապարհին:

Մայրը երկար դիտում էր ցնցուախների մէջ փաթաթուած որդու ետևից, մինչև որ նա անյատացաւ մերձակայ տների պատերի արանքում:

## Բ.

Օրիորդ չամասփիւո Թառլանեամը շատ ուրախ տրամադրութեան մէջ էր այդ տաւաւօտ: Սովորականից դուրս աւելի աշխոյժ էր նա այժմ. թրթռալով սատսատում էր մէկ սենեակից զէպի միւսը, մի պահարանից անցնում էր միւսին: Ի՞նչն էր նրան այդպէս թրթռան դարձել. գեղատեսիլ եղանակին արգեօք.—մի կողմից թերիս, որովհետեւ մտադիր էր զրոսանիքի ենելու: Բայց ուրախութեան գլխաւոր պատճառն այն էր, որ այսօր առաջին անգամ իւր նոր աշնանային զգեստը պիտի հագնի: Ասում են, որ միայն աղքատներն են նոր շոր հագնելիս ուրախանում, իսկ հարուստաները. ինչի՞ համար են նրանց նուրբ կտորները, զոյնզգոյն ժանեակները, երիդները, թեթև զարդերը: Այդ բայցը ուրախացնում, պարարտացնում է նրանց, թուշք տալիս ոտներին, ոյժ—ձայնի բարերին: Նրանք են վայելում կեանքը: Ու հրճում էր օրիորդ Համասփիւո, որ աշնանային նոր շոր պիտի հագնի: Այդ շորերն առաւօտեան վաղ նա պատրաստ գրել էր հագնուելու սենեակում: Այժմ նա ծառային ուղարկեց իւր ընկերունու օրիորդ Աշխէնի մօտ, պատուիքելով պատրաստուել զրօսանքի ենելու համար, իսկ ինքն սկսեց հագնուել: Ամենից վերջում հոտաւէտ ջրերով սրսկուեց, երեսին սպիտակ փոշի ցանեց և, առնելով հովանոցն ու սիդիկիւլը, դուքս զնաց մօր հետ գրկախառնուելուց յետոյ:

—Խանում, խանում, —դիմեցին նրան մի քանի երեխաներ հէնց մուտքի առաջ, վտիտ ձեռքերը մեկնելով:

—Մի կոպէկ, խանում, քաղցած եմ: Գիտէք, այսօր դեռ հաց շեմ կերել է:

Նոյն խօսքերը մի քանի տեսակ փոփոխելով, տարբեր ելևջներով կրկնելով, գնում էին նրանք օրիորդի հետ զրեթէ զուգընթաց: Խոկ օրիորդը լուս ու մունջ առաջ էր գնում ոչ մի հայեցք չձգելով կողքի երեխաների վրայ:

—Դէ շուտ, աիկին,—ասում էր մէկը համարձակ շեշտով:

—Ասուած որդիդ պահէ, քոյրս տանը պառկած մի կտոր հացի կարօտ է, մի կոպէկ տուր տանեմ հաց առնեմ,—ասում էր մի ուրիշը աղերսելով:

—Կորէք, կորէք,—ասաց օրիորդը, երբ շուրջը նայելով տեղեկացաւ, որ շրջակայրում պատուաւոր մարդիկ չկան:

Խոկ երեխաներն անդադար հետեւում էին նրան նոյն ընթացքով շարունակ աղերսելով:

—Կորէք, ասում եմ ձեղ, թէ չէ... ասաց օրիորդը ծածկած հովանոցը, որ իրք ձեռնավայտ էր գործածում, կիսով չափ բարձրացնելով: Երեխաները վախից թէ ձանձրոյթից հեռացան:

Շուտով նա հասաւ օրիորդ Աշխէնենց տուն, և երկու ընկերուհիները գրկախառնուելուց յետոյ դուրս եկան դրօսնելու ինչպէս անհոգ թիթեռնիկներ:

#### Գ.

Ամբոխը վխտում էր: Եկեղեցի էին եկել ամենքը, բայց ներսում միայն մի քանի ծերունիներ էին կանգնած, իբրև ներկայացուցիչներ հասարակութեան կողմից Սստուծոյ աան մէջ, և մի քանի երիտասարդներ՝ շատերի կարծիքով կեանքից ձանձրացած մարդիկ: Խոկ դրսում ամբոխը վխտում էր. սիրալիք բարեներ, ուրախ քրքիչներ, առօրեայ հարցեր, զուարճութիւն և զրոսանք, ահա աղօթքի և ապաշխառութեան տան առաջ ինչ կարելի էր գտնել: Այդտեղ նոյն խոկ առնողն առնում էր, տանողը տանում, հարուսաը իւր գործերի մասին խորհրդակցութիւններ անում, երբեմն շմոռանալով կուշտ-կուշտ ծիծաղել իւր ունեսը ընկերակցի հետ: Ամբոխը սովորականից դուրս շատ էր այսօր, որովհետեւ քաղաքը իւր քարեկործներից մէկի մահուան տարեգարձն էր տօնում: Այսօր նրա համար հոգեհանգիստ են կատարելու: Տօնի առթիւ ներկայացում պիտի լինի «Արտիստիքական ընկերութեան» դահլիճում. որի գոներին միծ-միծ գրերով կարդացում է ներկայացուելիք դրաման «Պարա Լիօն»: Պարերի կոյթներ և հանդէսներ էլ պիտի լինին և այդ բոլորից ստացուած

արդիւնքով մի ուսումնարան պիտի բանան հանգուցեալի անունով, այնպիսի բան, որ չկորչի, որ իրք կոթող միշտ ցցուած մնայ ապագայ սերնդի առաջ: Խոկ մանը, ցրուած ցաւերը, վերբերն ով պիտի բուժէ, վերացնէ: Այդպիսի գործերից կոթող չի կանգնում. ծածուկ վշտեր ամոքել, տառապեաներին միսիթարել, քաղցածին հաց տալ, մերկին հապցնել—գրանք յիմարների, «Հշի նահատակների» գործեր են: Այդպիսի բարեկործութիւններն անմատչելի են մարդկանց: Ահա խոնուող ամբոխի առաջ վխտում են տասնեակներով կիսամերկ խմբեր—աղջիկ ու տղայ, մեծ ու փոքր, կին ու տղամարդ: Հարիւրի ականջին են համառում «մէկ կոպէկ», «մի ողորմութիւն» խօսքերը, խոկ զրանցից մէկի գրանից հաղիւ մի կոպէկ է դուրս գալիս: Խոկ ով աւելի լաւ է համարում «մեռնել քան ձէոք մեկնել և մերժումն ստանալ», յիրակի կը մեռնի քաղցից:

Օրիորդ Համասփիւռ Թաւլանեանն էլ իւր ընկերուհու հետ զրօնում էր բազմութեան մէջ եկեղեցու բակում: Նա գեղեցիկ էր Աշխէնից. այդ բանն զգում էր նա և ամեն անգամ երբ կողքից անցնողը սկսեսում էր աշքերը նրա հապարտ զէմքին, օրիորդին աշքի տակով նայում էր ընկերուհուն և բարձրացնում իւրանը: Նայողին թւում էր, որ այդ գեղեցիկ ու բարձրահառակ օրիորդը իւր հետ քարշ է տալիս ընկերուհուն իրք հակապատկեր՝ իւր գեղեցիկութիւնը համեմատական չափով ցոյց տալու համար: Եւ նայում էին նրան ու ըստ երեսյթին հիանում երիտասարդները:

Մերկանդամ մուրացիկների խումբը շուտով նրանց հասաւ:

—Տիկին, մի ողորմութիւն,—լսում էր ամեն մի կողմից մի քանի բերաններից:

Օրիորդը ձեւքը գրանը տարաւ, հանեց մի սպիտակ դրամ և տալսվ նրանցից մէկին՝ պատուիրեց բաժանել միմեանց մէջ:

—Հապա տեսէք, օրիորդներն էլ ողորմութիւն են տալիս,—ասաց մի երիտասարդ:

—Ինչո՞ւ էր զարմանում,—ասաց մի ուրիշը, —իմ կարծիքով կինն աւելի ողորմած պիտի լինի տղամարդուց, որովհետեւ տղամարդն զգացմունքների այն նրբութիւնը չունի, ինչ որ կինը:

—Փիլիսոփայութիւնները թողնենք և խնդիրը մասնաւորենք: Այս օրիորդը ողորմութիւն է տալիս, որովհետեւ ոչ մի ուրիշ դէպքում նրա գեղեցիկութիւնն ու չնորհալիութիւնն այնպէս քնքոյշ կերպով չեն արտայառուիլ, ինչպէս արտայայտուեց մի փորք առաջ փող բաժանելիս,—ընդմիջնեց խմբուած երիտասարդներից մի ուրիշը:

Օրիորդները հեռու չեն. նրանք լսում էին այդ բոլորը և

հրճւում էր օրիորդ Համասփետը: Հաստատեցին, ուրեմն այլևս կասկած չկայ, որ նա գեղեցիկ ու չնորհալի է, և հաստատողը մի լաւ հագնուած երիասապրդ, հաւանօրէն արդի նըրաճաշակ ու կանացի գեղեցկութեան նկատմամբ պահանջկոտ մէկը և այդ իւր ընկերուհու տուած: Թերես վաղը կամ միւս օքը... և մի ինքնաբաւղի կոչ գուրս թռուաւ նրա բերանից—կոչ գէպի խընդըրող-մուրողները. նա նորից մի քանի սպիտակ դրամ հանեց սիդիկիւից, մանրեց և բոլորին առանձին առանձին բաժանեց, այժմ աշխատելով աւելի շնորհալի երեալ: Այս բոլորը նրան մի կատարեալ յաղթանակ էր թռում:

## Դ.

Ժամը վերջացել էր. բոլորը տուն էին շտապում, որը գոհ, մաքում աղօթելով Սատծուն, որ ընդունելի դարձնի իւր մի քանի կապէկ ողորմութիւնը, որը ախուր այն մաքով, որ չկարողացաւ աղքատի ազերսին բաւականութիւն տալ, որովհետեւ չունի, հազիւ է կերակում իւրայիններին: Օրիորդ Համասփետն ու Աշխէնն էլ տուն հասնելու վրայ էին, բայց նրանք սրաի հաշիներավ չէին զբաղուած: Նրանց առաջ ճանապարհին կանգնած էր մի որը պատանի սրարկ կոնասակին, որ ձեռքը լուռ ու մոռնջ մեկնել էր դիմացիններին.

—Ուհ, ատում եմ ես խեղճութիւնը,—ասում էր Համասփետը, —որովհետեւ ինձ թւում է, թէ մարդիկ իրենք են խեղճութիւն ստեղծում իրենց համար:

—Խեղն է, բայց որքան գեղեցիկ է վշացածը, ինչ զրաւիշ աշքիր:

—Տես, որ մուրալով հարսաւանալուց յետոյ մեղ նման հարիւրի միջից մէկին էլ է չի հաւանելու:

—Հէնց այդ պատճառով այժմուանից պէտք է տալ և ստրկացնել գեղեցկութիւնը: Ի՞նչպէս լինի, որ իւր ծաղկած հասակում շրիշ այդ կոտէկները:

Եւ Աշխէնը գնառեց սիտիկւլը և որքան դրամ էր մնացել, տուաւ որը պատանուն:

Նրանց տունը մօա էր, ներս մտաւ, իսկ Համասփետը շարունակեց ճանապարհը: Երբ հասաւ տուն, մօքը իւր սենեակում չգտաւ, վաղեց խոհանոց, ապա լուացատուն:

—Այնքան ողօրմութիւն տուի, մայրիկ, այնքան, որ վախենում եմ ասել:

—Ո՞քաեղ, որդիս:

—Եկեղեցու բակում: Բոլորն էլ փսփսում էին իրար ականջի՝ «Ում աղջիկն է սա». իմ սիրաս էլ բացուեց, մէկ-մէկ, երկ-երկու բաժանում էի ու բաժանում: Դալիս էլ հէնց Աշխէննց գուան մօա մէկը մօաեցաւ ու վիզը ծռեց, չի էլ սպում բերան բանալ: Երբ ես ասացի «չկայ, գնա», նա մի խղճալի ձայնով «ափկին» ասաց: Նրա այդ ձայնի վրայ ես աւելի բարկացայ. գիտես էլի իմ ընաւորութիւնը, որ արաւոտը, լաց, խեղճութիւն, թշուառութիւն ասած բաները չեմ սիրում, թէ ինչո՞ւ, ինքս էլ չգիտեմ: Մեռելատան մօտով շեմ կարող անցնել, լացի ձայն շեմ ուզում լսել:

—Մուս, սուս, որդիս, դրանք այնպիսի բաներ են, որոնցից ոչ չի կարող խուսափել:

—Լուացարարը թողել էր գործը և հետաքրքրութեամբ լսում էր:

—Դէ, ինչ անեմ, մարիկի, չեմ սիրում ու չեմ սիրում: «Չկայ, կորիր», ասացի և նա հեռացաւ: Բայց Աշխէնը—մեռնի նա—կանչեց նրան: «Ի՞նչ գեղեցիկ է վշացածը, —ասաց, —կարգին շորերի մէջ զա հազար անգամ միրուն կըլինի, քան մեր մողնի երիտասարդները»: Այս ասելով քըրեց սիդիկիւլը և եղած դրամները տուաւ աղքատին: Իսկ ես չկարողաց հաշտուել նրա հետ. նա ատելի մնաց ինձ համար: Բայց իսկամես գեղեցիկ էր, մեծ-մեծ աշքերով: Անցորդները վահան էին կոչում նրան:

Այդ խօսակցութեան միջոցին լուացարարի դիմագծերը զանազան շարժումներ էին զսրծում, նման ջղային ցնցումների: Թում էր, որ օրիսրդի իւրաքանչիւր խօսքը շանթահարսում էր նըա ամբողջ էութիւնը: Երբ օրիսրդը վերջացրեց, լուացարարը մի յանկարծական շարժում էլ արաւ, խօս հառաչց գլուխը խոնահելով, կարծես անդօր զգալով իրեն անողոք իրականութեան առաջ: Մէկ, միայն մէկ կաթիւ, բայց մեծ, ծանր կաթիւ արաւասունք դուրս ցայտեց նրա աշքից: Նա սըրեց աշքերը, չուփս ձեսքով ծնկներին խիեց ու ասաց դողդոջիւն ձայնով մրմնջալով:

—Քուանամ ես:

Դա Վահանի մայլն էր, Շուշանը:

Մ Ա Ր Դ Կ Ա Ս Ն Ց Փ Ո Խ Ա Ր Է Ն

ձաշից վեր կենալով բոլորս անցանք դաշիճ, որ կից էր սեղանատանը: Դահլիճի վերին ծալրում դրուած էր մեծ կոր սեղանը թաւշեայ սփռոցվ ծածկուած, որի վրայ բացի սովորական արդուղարդից կային և մի քանի նկարչական ժողովածուներ: Բոլորս էլ տեղաւորուեցանք: Տիկին Տօնականները բռնեց կողքի մեծ բազկաթոռը և առաջինը բաց արաւ ժողովածուներից մէկը: Դա վայրենի կենդանիների ժողովածուն էր, ուր սկսած հիւսիսային սպիտակ արջերից մինչև այրեցեալ գոտու առիւծները աեղ էին բռնում վայրենի բոլոր կենդանիները:

Սուածին իսկ հայեացքից տիկինը մուայլուեց. Նրա բաց ճակատը հուպ եկաւ, վրան մի քանի գեղեցիկ խորշոմներ ու ակօմներ ձևացնելով: Նա մի թեթեակի հայեացք ձգեց շրջապատողների վրայ ու դարձաւ երիտասարդներից մէկին, որին հէնց նոր մի մեծ առետրական ընկերութեան անդամ էին ընտրել:

—Մենք էլ սրանց նման մսակեր կենդանիներ չենք, հապալ ինչ ենք. զանազանութիւնը նրանումն է միայն, որ զրանք իրենց հզօր ճանկերովն են որս ճարում և ուտում, իսկ մենք նոյնն անում ենք միջնորդաբար. ուրիշին բռնել մորթել ենք տալիս և մենք ուտում: Միջոցները տարբեր են, իսկ նպատակը անկասկած մի- կոյնն է:

—Տիկինը վեգետերեան է,—ասաց երիտասարդը թեթև ժպտա- լով և բեկների ու միջուրի ծալրերը թոյլ կերպով շօշափելով:

Մինչ տիկինը պատրաստում էր պատասխանելու, նոյն բռպէին բակից մի սուր շանահաջոց լսուեցաւ: Տիկինը յանկարծ վեր թռաւ և գէպի այն կողմը նայեց շփոթուած, որտեղից լսուել էր ձանը, չնայելով որ լսուածը սովորական շանահաջոց էր: Զայնից փոքր ինչ յետոյ երկաց աղախինը, որ սկսեց հաւաքել ճաշի սեղանը: Նրա հետ սենեակ էր մտել և մի չնիկ, որը, կանգնելով մի կողմում, խեղճ- խեղճ նայում էր աղախին: Նա ուրախ ուրախ չէր ոստոստաւմ միւս

չնիկների նման, չէր խաղացնում իւր պոչը, չէր փաթաթւում իւր տիրուհու ոտներին: Նա կարծես մի յանցաւոր լինէր, որ որեէ կերպով ուզում էր քաւել իւր յանցանը: Շատ անգամ է պատահում, որ զղջացող յանցագործի տանջանը թեթեացնելու համար գիմացին ներն աշխատում են ցոյց տալ, թէ նա յանցաւոր չէ, երբեմն սիրողներն ակամայ իրենց վրայ են առնում սիրելիների յանցանը: կենդանիներից ոմանք, յատկապէս շունը, շատ նրբազզաց են նոյնանը- ման երեսթների ժամանակ: Այդ էին ցոյց տալիս փոքրիկ շան աշքերը. նրանք կարծես ասում էին, որ կըներեն վիրաւորանքը, միայն թէ բացուի տիրուհու հայեացքը, ժպտան նրա աշքերն ու շրթունքը: Բայց շունը վարանում էր, չէր մօտենում երբեմն միայն ցածրանում էր, գունչը թաթերին զնում, կարծես կամենում էր սիրտ անել խաղալ սկսել իւր տիրուհու հետ, նրա ոտներին վարել: Վերջապէս մէկ անգամ էլ կուշ եկաւ և իր ոստիւնով վեր ցատկելով բռնեց տիրուհու շրջազգիսամի ծայրից և ամուր քաշեց: Խեղճ կինդանին սխալուել էր, որովհետեւ կինը հեռաւոր առարկաներով էր զբաղուած. կէնդանու անժամանակ խաղը նրան ծաղը էր թւում, ուստի սթափուելով մի ամուր հարուած հասցըեց նրան ոտով ու աղաղակեց.

—Կորիք, սատանայ...

Ճունը սիրտ կտրատող կաղկանձիւնով ուղիղ իւր տիրուհու աշքերին նայեց, կարծես կամենալով տեղեկանալ, արդեօք խղճի զգացում զարթեցրեց իւր ցաւօտ ձայնով: Ծան այդ հայեացքի մէջ տմին ինչ կար թէ խեղճութիւն ու անզօրութիւն, թէ հաւատարմութիւն ու ներզամառութիւն, թէ յանզիմանութիւն ու ցասում: Մի վայրկեան միայն տեհց այդ զրութիւնը. կինը նորից բարկացաւ, և շունն աշքի տակսվ տիրուհուն նայելով գլխիկոր դուրս գնաց. Նա դարձեալ կաղկանձում էր. Նրա կաղկանձիւնը հետղիետէ նուազելով վնագնգոյի փոխուեցաւ, որը մինչև մարելը լսելի էր գահլիճում:

Թուրին արձմնացել էին. Նրանցից ոմանց երեսին դառնութիւն էր նկատում, կարեկցութեան զգացմոնք արտայատող մի այնպիսի դառնութիւն, որ անմիջական տպաւորութիւնների և զգացմունքների ազգեցութեան տակ միայն երեսում է: Ոչ որ չկարողացաւ, կամ աւելի ճիշտ չհամարձակուեցաւ կնոջը մի բան հարցնել այդ տարօրինակ երեսթի մասին, աղախինը լուռ ու մունջ հաւաքեց ամեն ինչ, մարբեց, կարգաւորեց ու դուրս գնաց.

—Պարօններ,—խանգարեց տիրող լուռթիւնը տիկին Տօնա- կանեանը մի խոր հառաջ արձակելուց յետոյ, —շատ խոր ազգեց ինձ

վրայ այդ երեսիթը, ինչպէս առհօսարակ այն բոլոր երեսիթները, երբ անկեզու և անպաշտան կենդանու տանջանկներն եմ տեսնում: Սակայն սա ինչ բան է իմ վաղուց տեսած մի երեսիթի համեմատութեամբ, որը ես կը պատմեմ, եթէ ախորժակ սնիքը լսելու: Նոր պատմելիքիս մի աշքի ընկնող կէտը, որ կը տեսնէք, այն է, որ ինքը տանջողը տանջուողից աւելի էր տանջուում. այդ կէտը շատ նկատելի է նման երեսիթներից շատ շատերի մէջ: Ամեն անգամ այդ դէպքը յիշելիս մազերո փշաքաղուում են և ամբողջ մարմնովս դողուում են:

Մենք լսելու պատրաստակամութիւն յայտնեցինք, աիկինն սկսեց պատմել:

Մի նոր աղախին էի վարձել Աննա անունով: Առաջին իսկ օրից նա չափազանց դիւր եկաւ ինձ: Երբ համեմատում էի սրան նոր արձակուած աղախինս հետ, թւում էր ինձ թէ Աննան երկնքիցն է եկել: Համեստ, պարկեշտ, ժրաշան, մաքրասէր, հնապանդ—յատկութիւններ, որոնք, բոլորդ էլ գիտէր, հազուագիւտ են ծառայուների, յատկապէս աղախինների վերաբերմամբ: Այսպէս Աննան ծառայում էր հրաշալի կերպով, և ես շատ զո՞ն էի. նրանից լաւ աղախին, եթէ լինէր էլ, ինձ պէտք չէր, այնքան էի հաւանում Աննային: Երեխաններս էլ սիրեցին, և այդ աւելի ուրախացնում էր ինձ:

Երկու թէ երեք շաբաթ անցնելուց յետոյ Աննան մէկ անգամ քաշուելով արձակուրդ խնդրեց իւր մի ընկերունուն այցելելու, երեկոյեան վերադառնալու պայմանով: Ես, ի հարկէ, թոյլ տուի: Նա երեկոյեան ուշ վերադարձաւ: Ես մտածում էի, որ նա էլ միւս աղախինների նման արբած կը լինի, և շուտով սովորական ազմուկը կը կըրկնուի, բայց ոչինչ արտասովոր բան չպատահեց: Սակայն Աննան այդ երեկոյեան չերկաց, խոհանոցից դուրս չեկաւ. իսկ ես, ուրախանալով որ չար նախագուշակութիւնս չի կատարուել, չհետաքրքրեցայ արդիօք արբած է թէ ոչ, ինք ինձ վճիռ կայացնելով. «քարը գլխին, իմել է, թոյլ հանգստանայ, միայն թէ աղմուկ չը բարձրացնի, հարկաններին դիմներիս չհաւաքի: Առաւօտուանից սկսուեցաւ կանոնաւոր ծառայութիւնն ինչպէս առաջ, միայն այս անգամ Աննային ընկերակցել էր մի փոքրիկ չնիկ, ճիշտ այնպիսին, ինչպիսին փոքր ինչ առաջ տեսաք պատեղ: Այդ էլ ոչինչ, միայն թէ յետոյ էլ կատու շրերէր—ուհ, կատուններին չեմ սիրում.—ես այդ շան էլ սիրեցի, մանաւանդ որ նա յիբաւի գեղեցիկ էր. կարմիր կաշուց կարած վըզնոցը զինն շարունակ դուրս ու ներս էր անում իւր ախունու հետ: Մենք նրան չինք արգելում սենեակները մանել,

որովհետեւ բացի սիրունութիւնից նա մաքուր էլ էր: Նա յիբաւի որ «ոօզա» էր, վարդ:

Թէ որքան ոէր էր տածում Աննան դէպի իւր չնիկը, չգիտէինք: Երբեմն կատակով մենք շանն Աննայի երեխան էինք համարում, տեսնելով թէ ինչպէս նրանից անքաժան դուրս ու ներս էր անում: Դոկ չերմ սէր առանձնապէս չինք նկատում, աւելի շատ Աննան փիթվինթում էր քթի տակ նրան տեսնելիս ու հահոյում, քան սիրում: Ինձ համար նրանց յարաբերութիւնը պարզ եղաւ հետեւալ դէպքով:

Մէկ օր ճաշից յետոյ կամացուկ խոհանոց մտայ. ինչ որ որոնում էի: Կամաց էի ուղում մտնել, որովհետեւ կարծում էի, որ Աննան քնած է և չէի կամենալ նրան արթնացնել: Կարծիքս ճըշտելու համար նախ պատուհանից նայեցի. Աննան պառկած էր շունը գրկում: Վարդկանց կողմից շտա էի տեսնել սէր դէպի կենդանիները, մանաւանդ գէպի շունը, որ այնքան հաւատարմութիւն է ցոյց տալիս իւր աէրերին, բայց այդպիսի սէր առաջին անգամն էի տեսնում: Երկու ձեռքերի մէջ շան դոնիչը բռնած, Աննան ջերմաջերմ համբոյրներ էր սեղմում նրա սե, լարծուն դնչիկին. Երբեմն էլ շան գէմքը իւր գէմքին սեղմելով գլուխը երեսն ի վայր դնում էր բարձին և այդպէս երկար, երկար մնում, կրկին շուր գալիս ու համբուրում:

Զկարողացայ համբերել, ներս մտայ: Աննան վեր թռաւ, շունը մի կողմ ձգեց ու կանգնեց առջևս, երեսը սրբելով. անշուշտ արտասուներին էր սրբում: Ես հասկացայ, որ բարձի վրայ երեսն ի վայր ընկած միջոցներին նա լալիս էր եղել: Բայց ինչո՞ւ. աւելի շատ ես նրան ուրախ արտագրութեան մէջ էի սպասում գանել, քանի որ սույնագ համբուրներ էր դրօշմում իւր սիրած կենդանուն: Համբոյր և լաց... Այս, պատահում է, որ չափազանց ուրախութիւնից էլ մարդկի լաց են լինում, բայց այդպէս չէին ասում Աննայի աշքերը, գէմքը: Հոգեբան չէի, այժմ էլ շատ բան չեմ հասկանում այդ դիտութիւնից, ուստի հարցըի:

—Ի՞նչ է պատահել, Աննա:

—Էհ, տիկին, երբ յիշում եմ անցեալս, ուզում եմ գնալ ծովն ընկենել բայց թոյլ, անկարող եմ զգում ինձ այդպիսի բան անելու, սկսում եմ լաց լինել և, հաւատացէք, տիկին, թեթեանում ու հանգստանում եմ...

Ես շատ հետաքրքրուեցայ այդ անցեալով և ստիպեցի նրան պատմել:

—Էհ տիկին, ի՞նչ պատմեմ, քանի որ անցած է. բացի սիրտս տակն ու վրայ անելուց ուրիշ ոչ մի օգուտ չունիս: Այնուամենայնիւ...

Երկու տարուայ հալս էի, երեխատէր կին, երբ գժառութիւն ընկաւ իմ և ամուսնուս մէջ: Ես էի յանցաւորը թէ նա, այդ ես չեմ ասիլ, չեմ էլ կարող ասել, քանի որ Աստուած միայն կարող է իմանալ, միայն թէ այլ ես միասին ապրել չէինք կարող: Մենք ստիպուած էինք բաժանուել: Երեխաս, Օսիպս... ամս, իմ սիրելիս... շատ սիրուն էր, հայրը շարունակ իւր գրկումն էր պահում, երբ տանն էր լինում, թէ շատ քիչ էր լինում տանը. Այդպէս՝ հայրը պնդեց, որ ինքը կը վերցնի երեխային և... վերցրեց: Ի՞նչ կարող էի անել. օրէնքը կարծեմ հօրն է տալիս երեխային, չ՛, տիկին: Հա, տանն ուրիշ ոչինչ չունէինք, բացի այս չնից: Երբ բաժանման վերջին բովին հասաւ, ամուսինս բարկացած մատով ցոյց տուեց շունը և գոռաց երեխիս. «Դատարկ մի դուրս գնալ, այ քեզ, վերցրո՞ւ, թէ նրան էլ արժանի չես, թերես մի բանով քեզ կօգնէ»: Այդպէս՝ մենք բաժանուացանք. նա երեխայիս վերցրեց, իսկ ես... այս կենդանին, մի շուն...

Նա կամացուկ հեծկլտաց և գլորուեց բարձի վրայ: Նա լաց էր լինում, և ես լսում էի նրա այս խօսքերը լացի միջից. «Այս, իմ սիրելիս, երնէկ իմանայի, կենդանի ես թէ...»

—Եւ միթէ դու այդ շանը սիրում ես քո երեխայի...

—Ոշ, տիկին. ճիշտ է, ես սրան սիրում եմ, որովհետեւ առաջ էլ սիրում էի, բայց այդ սէրը միջնորդական սէր է. Այժմ ես սրան սիրում եմ լոկ այն պատճառով, որ սա լիշտութիւններ է զարթեցնում իմ մէջ, բայց այդ լիշտութիւնները երկդիմի են—սիրելի և տաելի, միացած՝ մի անբաժան միտութիւն կապմած: Ցիշում եմ երեխայիս, սիրում, համբուրում եմ այդ շանը, որին ամուսինս որդուս փոխարէն զիիս է փաթաթել և որքան էլ ցանկանալու լինիմ բաժանուել սրանից՝ չեմ կարող. լիշտում եմ ժանտագէմ ամուսնուս, ատելով սկսում եմ ատել այդ կենդանուն, ուզում եմ յօշտել, ծուատել դրան: Երկու զգացումներն էլ հաւասար ազդեցութիւն ունին զըս, մէկը չի կարողանում միւսին յազթահարել. երանի ինքս կարողանայի մէկն ու մէկը գերազանել, գուցէ տանջանք թեթեանար: Բայց չեմ կարողանում: Պատահում է... Գիտէք էլի, տիկին, դուք շատ լաւ գիտէք, ծածկեն աւելորդ է... Պատահում է, երբ խմում եմ իմ վիշտը փարատելու համար, ծեծում, տանջում եմ խեղճ կենդանուն, որովհետեւ այդպիսի դէպքերում միայն չար ամուսինս է ներկայանում երեկայութեանս մէջ. այդպիսի դէպքերում առհասազակ մի անկապ, բայց զօրել, խոր զիտակցութեամբ պատկերանում է ինձ բոլորը... բոլորը...: Երեկ երեկոյեան այդպիսի մի գիտակցութեամբ վերա-

դարձայ տուն. Ես տանջւում էի, սաստիկ տանջւում, բայց որովհետեւ վշտիս իսկական հեղինակին գտնել և տանջել չեմ կարողանում, ուստի սրահի մաղձը թափեցի խեղճ կենդանու գլխին, որ մի առանձին յամառութեամբ աշխատում է երբէք չժողովնել վշտիս առարկաները մի րոպէ անգամ մոռանալու: Բայց դու տես, տիկին, որ յետոյ էլ շան տանջանքն է ինձ տանջում, միրտս կը ծուռ, և չեմ իմանում ինչպէս հանգստացնեմ ինձ. Երեկ տանջել եմ, իսկ այսօր համբուրում եմ, անյագօրէն համբուրում, բայց և այնպէս մի ներքին ձայն ինձ ասում է. «զըսանով չես քառում յանցանք»: Է՞հ, տիկին, ով կարող է մեր զրութիւնը մտնել, մեր սիրտը հառկանալաւ...»

Ես ասելու ոչինչ չունէի, մնացել էի ապշած այդ տարօրինակ ընաւորութեան առաջ: Այնքան խոր ըմբռնում էր նա իւր զրութիւնը, որ ոչ մի մսիթական խօսք չէր կարող ազգել նրան: Ստիպուած էի լուռ հեռանալ խոհանոցից...»

Այժմ Աննան յաճախ թոլլաւութիւն էր լինդրում տնից հեռանալու, ամեն անգամ պատճառ բերելով ընկերուհիներին այցելելը. Այդ մի հանգամանքն ինձ շատ զարմացնում էր, որովհետեւ նման մնաւորութիւնները շրջապատի մէջ բացի վրդովմունքից ոչ մի մսիթարանք չեն գտնում: Թէ որտեղ էր նա թեթեութիւն գտնում, ովքեր էին նրա ընկերուհիները, չգիտէի: Այսքանը միայն կար, որ ամեն անգամ նու վերադառնում էր «քէֆը տեղը», հակառակ իւր խոստման: Այդպիսի զրութեան մէջ վերադառնալուց նա յաճախ զալիս ներովութիւն էր խնդրում, երգուում էր այլ ևս տիգպէս չանել, պատճառաբանութիւններ էր բերում իւր արարմունքն արդարացնելու համար, յաճախ վերադառնում էր ուզզակի «շոն գառած», փնթփնթում էր, գոներն իրար զարկում, նոյն իսկ հայնոյում: Երբ յանդիմանում էինք, ուրիշ ճար չգտնելով սկսում էր ծեծել շանը, որի աղիողորմ կաղկանձիւնը վախեցնում էր երեխաներիս, մանաւանդ փոքրիկ Ռուբէնին: Եւ այս բոլորի պատճառն էր, ինչպէս տուացի, «խմում եմ վիշտս փարատելու համար»:

Մէկ անգամ, նման երեսյթներից մէկի ժամանակ, երբ Աննան սկսեց շանը ծեծել և վերջինս զլուխը կորցրածի պէս դիմեց գէպի Սուրէնը սուր կաղկանձիւնով. Երեխան ծեռքի փայտով խփեց շան մէջքին. սա կծկուեց, զետնին կպաւ և կրկին վեր բտրձրանալով դէպի խոհանոց վազեց մերթ դէպի տիրուհին, մերթ դէպի Սուրէնը յետ յետ նայելով:

Աննայի աչքերը փայլատակեցին:

—Է՞հ անխիզներ,—հեծկլտաց նա, —բաւական չէ իմ ծեծն

ու ատելութիւնը, դուք էլ մի կողմից էք տանջում: Ես ծեծում եմ և ծեծելու եմ, որովհետեւ իմ շուննէ, իսկ ուրիշներին թոյլ չեմ տալ, ոչ, թոյլ չեմ տալ մազին անգտմ դիպիել:

Եւ նա յառաջացաւ դէպի Սուրէնը հրացայտ աչքերով, բայց սթափուելով և ինձ տեսնելով կէս ճանապարհին կանգ տառաւ ու քայլերը դէպի խոհանոց ուղղեց:

Օրը մի յեղիդուկ օր էր: Ամպ ու արե, պայծառ լոյս ու ահապկու ստուերներ: Երբեմն ամպի մի մեծ կտոր, սրարշաւ լուղալով երկնքի երեսով, ծածկում էր արեգակը, որ նրա նոսոր ծալքերի միջից հազիւ կարողանում էր դաղտագողի մի թեթև հայեցք ձգել երկրի վրայ: Մերթ ամպերը կարծես հալածական դարձած փախչում էին արեգակի երեսից և յաղթանակ տալիս նրան: լուսաւորում էր երկիրը վառ ճառագայթներով, մի ուրախ ջերմութիւն էր տիրում ամեն տեղ. սակայն լոյսն էլ, ջերմութիւնն էլ երկշոտ են, որովհետև ահա հեռուից լոյսում է ամպի կտորը, թերևս նա չուտով կը համնի և կը մթնեցնի տիրող լոյս...

Օրուայ յանկարծակի յայտնուող ամպերից մէկի նման երեաց Աննան. ինձ թուաց, որ նոեմացաւ արեգակի լոյսը և ստուերով պատեց բակը: Նա լուս էր, բայց վրդովուած. անշուշտ խոհանոցում ծեծել էր շանը: Վերջապէս նա շարժուեց, ձեռքերը ծալեց կրծքին և ցածը ձայնով

—Ի՞նչո՞ւ էք տանջաւմ մեղ, —ասաց:

Մնացել էի երկու կրակի մէջ, ոչ շունն էր մեղաւոր, ոչ Սուրէնը, ոչ նոյն իսկ Աննան: Բայց և այնպէս ես զգում էի, որ այդ դրութիւնը երկար տեել չի կարող. լուել նշանակում է ապագայի համար նոյնանման շատ զէպքերի առիթ տալ. Բացարութիւն, խրաս աւելորդ բաներ են Աննայի նման կամանց համար, որին, պէտք ասած, կարճ ժամանակում կարողացայ հասկանալ: Պէտք էր արձակել նրան, և ես սառնօրէն յայտնեցի նրան վճիռս:

—Մինոյն է, մեղ նմանների համար երբէք հանգստառութիւն և ապահովութիւն չկայ, —պատասխանեց նա յուղուած և յայտնեց իւր պատրաստակամութիւնը, ապա գնաց խոհանոց:

Այսպէս՝ ամեն բան անցաւ, ես ուրախ էի, որ հեշտութեամբ պրայ այդ կնոջ ձեռքից: Խոստովանում եմ, խղճում էի նրան, պարտաւոր էի զգում ինձ խղճալու. բայց միւս կողմից տեսնում էի, որ անկարող եմ հաշտուել նրա բնաւորութեան հետ: Թերևս մի ուրիշը կարող էր հաշտուել: Այսպէս մտածելով ես կարծում էի, թէ բոլորին ազատուել եմ. բայց սխալուել էի:

Իրիկնադէմին Աննայի ընկերուհիներից մէկը նրան այցելութեան եկաւ: Նա ուրախ դէմքով մի կին էր, գեղեցիկ, բարձրահասակ: Ինձ աւեսնելով, բարենց, թեթև ժպտալով: Ես նրան հաւանեցի: Նոյն բոպէին պատկերացաւ ինձ Աննայի դէմքը՝ տխուր, մաղձոտ. մինչև շան դախն այդպէս չէր այդ դէմքը. մեզ մօտ աւելի մռայլուել էր նա: Ահա հէնց նա, Աննան: Նա գնում էր փողոց, շիշը ձեռքին: Ես հասկացայ, որ նո ուղում է ընկերուհու հետ միասին «ցաւերը փարատել». Օգտուելով հանգամանքից խոհանոց գնացի և նորեկին խնդրեցի մի աղախին ճարել ինձ համար: Նա յայտնեց, որ անգործ է, և ես ընդունեցի նրան ու պատուիրեցի վաղն առաւտուանից գործի գալ:

Մինչ այս մինչ այն—մինեց: Երկու բարեկամուհիները փարատում էին իրենց վշտերը, երգում էին ու խմում, խմում էին ու երգում: Երգն էլ օրուայ նման փոթորկալից էր: Յանկարծակի ցածրից դէպի բարձրը դիմող ձայները խաղաղութեան մէջ պայթող որոտների էին նման, մի որոտ սակայն, որ իսկոյն չէ հանգչում, այլ գալարուելով առաջ է գնում, շանթահարելու ամենահնարին ամպերը:

Երբ բաւական հագեցել էին, Սօֆիան, Աննայի ընկերուհին, յայտնեց իւր նոր տեղի մասին:

—Սօֆիա, —սրոտաց Աննան:

—Ի՞նչ անեմ, հոգի ջան, քանի քանի ամիս է անդորժ... պարտքի տակ...

—Ուրեմն սուտ է բարեկամութիւն ասած: Ուրեմն իմ ամենամօտիկ բարեկամուհին էլ օգտում է իմ խեզձ...

Ուզան անհանգիստ զրութեան մէջ էր. Նա նման էր մի երեխայի, որին մայրն աշքից ձգել է, անձնատուր եղած իւր զուարճութիւններին: Նրան չէին փաղաքշում, նրան ուտելու բան չէին տալիս, ուշազրութեան չէին արժանացնում: Ու նա կրծոտում էր իւր տիրուհու ոտները, քաշում էր փիշից ու պատում, կամենալով զգացնել տալ իւր ներկայութիւնը:

Աննան կատաղեց: Իզուր էր այնքան խմել. իսկ պաշտօնից զրկուելը, ընկերուհու արձնը, որ նրան գաւաճանութիւն էր թւում, անցեալ յիշողութիւնների արթնանձնը: Ատամները կրծտացնելով անցեալ յիշողութիւնների ամսւր հարուածներ հասցեց: Սօֆիան վրայ Ռողային մի քանի ամսւր կարուածներ իւլել նրա ձեռքից, որով հասաւ, աշխատում էր իւղանուն լիւել նրա կարտագութիւնը, ինչպէս պատահում է աւելի էր զըրգուում նրա կատաղութիւնը, ինչպէս պատահում է իրար են ենթակալի հակառակորդների իրար դէմ ենելու միջոցին: Սուրեկու սոսկալի հակառակորդների իրար դէմ ենելու միջոցին:

Քիային չյաջողուեցաւ այդ. Աննան ամուր բռնեց շանը և բարձրացրեց օդի մէջ: Ջան աղեկտուր կաղկանձիւնը մարդու սիրտ էր կտրատում, երեսում էր, որ նա այդպիսի բռալչներ շատ էր տեսել, բայց սա օրհասական էր լինելու:

—Սօֆիա, այդպէս ուրեմն,—ասաց և ամուր թափով կենդանուցի մի անկիւնը նետեց:

Կենդանին յուսահատ աղաղակով գալարւում էր անկիւնում:

—Բաւական է,—ասաց Աննան իրեն անկողնի վրայ ձգելով:—Ամուսնուց տանջանք կրեցի, երեխայիցս տանջանք կրեցի, եթէ բոլոր մարդկանցից էլ կրեմ, ինչ կըլինի իմ օրը: Այդ կենդանու սրտի շափ էլ է եթէ սիրտ գտնէլ մարդկանց մէջ... Բայց ինչ մեղաւոր էր խեղճ կենդանին... Հէնց իրենց մարդկանց... Թւր ես ոյժ...

Կենդանին անկիւնում տնքում էր. այդ օրը նրա վերջին օրն էր...

Պարոններ, դարձաւ աիկին Տօնականեանը շրջապատոլիներին, դուք կըկարծէք, թէ Աննան խելագար էր: Կըսխալուէք, եթէ այդպէս կարծէք: Դրանք հասարակութեան մեղքեր են, ամեն ոք իրենից գուրս ոչինչ չի տեսնում, և հետզդեաէ բազմանում է այդպիսի մեղքերի թիւը: Ընտանիքը հեռացրել էր նրան իւր միջից և անպատիք էր մնացել. հասարակութիւնն էլ չէր ուզում նրա վիշտը ճանաշել: Հէնց ես թերես յանցաւոր եմ նրա առաջ: Անկարսող լինելով հասարակութիւնից վրէժ լուծել, նա խեղճ կենդանուց լուծեց այդ վրէժը, մի անմեղ կենդանուց:

## Մ ի Մ ի Ա Յ Ն Մ է Կ Բ Ա.

Այն օրը սովորականից շատ աւելի ուրախ էր Բուռնցքեանը: Եւ ինչու ուրախ չլինի, կըմտածէր նրան առաջին անգամ տեսնողը, տունը լաւ, ապրուստը լաւ, գրպանը լիքը: Նրա արագինն իրքեա ապացոյց կարող էր ծառայել այդ ենթագրութեան—լայն երես, յաղթանդամ իրան, հաստ, գրեթէ կախ ընկած փոր, —նշաններ, որոնք այնպէս բարձրացնում են մարզուն չքաւորի, խեղճի առաջ: Այդ բոլոր պարեպատեհ պայմանների մէջ նրա կապոյտ, միշտ խաղացող աշքերն ու մերկ, պապղուն ճակատն էին միայն հակառակ դիբը բռնել—նշաններ, որոնք ժողովրդի մէջ այնքան աննպաստ բացատրութիւնների տեղիք են տալիս. «Ճաղատից, քաշալից հեռու կաց» —ահա այն խրատը, որ իրական փորձերը դարձերից ի վեր բերնէ բերան անցկացնելով հասցել են մեզ:

Բուռնցքեանը վատ մարդ չէր—այդ նշանակում է, որ նա ուր պէտք էր՝ քաղցը էր պահում իւր լեզուն, քաղցը ինչպէս շաքար, թերես շաքարից էլ աւելի. Նա զրում մեղմ էր, զուարձախօս, իսկ ընկերների շրջանում յայտնի էր քաղցրախօս անունով: Նա ամենայն սիրով սեպհականել էր իրեն այդ անոնը, որ տուել էին նրան քաղաքի յայտնի մարդիկ՝ իւր մօտիկ ընկերները. ինչու մերժել հասարկաց բարիքը:

—Մեռնելու չե՞նք, ախպէր, դիմում էր նա բոլորին քաղցրախօսութեան բռպէններում:—Մեռնելը, մեռնելու ենք, մի քաղցը խօսքն է մնալու: Եւ այս ասում էր այնպիսի մի եղանակով, որ լսողը կամայակամայ հաւատացնում էր իրեն, թէ խօսողը մի միամիտ և մինոյն ժամանակ բարի մարդ է:

—Հա ա ա, հաւատացնում էր կողքինը, բանիդ կաց:

Զարմանալի է մարդկային սիրացը: Քանի՞ քանի՞ տարրեր իսպեր են տեղի ունենում այդ փոքրիկ մսի կտորի մէջ երբեմն կարճ, երբեմն տեղող, երբեմն սկզբնաւոր, բայց անվախճան: Տեսնում ես մարդ է, ընկերոջ, բարեկամի համար մի հոգի, մի հրեշտակ, որից չես ուզում

բաժանում, բայց կըտեսնես անցաւ որոշ ժամանակամիջոց, կեանքի մի այլ ստուեր անցաւ և փոխուեց ամբողջ պատկերը—գառը գայլ դարձաւ, բարեհամբոյքը դաժանացաւ, սէրը ատելութեան փոխուեցաւ:

Բոլոր մարդիկ ենթակայ են այդ անողոք երեսոյթին:

Բայց Բոռնցքեանը... նա ուրիշ էր Կեանքի մէջ նա այլ ուղի էր բռնել իրեն համար, կամ աւելի ճիշտ ասած՝ սաեղծել: Խըաքանչիւր տեղ ուրոյն վարմումք ու լեզու ցոյց տալ, իւրաքանչիւր տեղ ուրոյն հաշիւ տեսնել սրտի հետ:

—Քաղցը լեզուն ամենամեծ գէնքն է: Շողոմքոր գառը տասն մէր կծծի:

Այս նրա արտաքին քաղաքականութեան դոգման էր: Յիրաւի քաղցրախօսութիւնը և կենսական զգուշութիւնը բաւական օգնում էին նրան: Մարդիկ ստիպուած էին սիրել կամ աւելի ճիշտ՝ վախենալ նրանից:

—Երես տաս՝ աստառ էլ կուղեն: Եղիր սատանայ, միայն թէ վախենան քեզանից:

Այս էլ նրա ներքին քաղաքականութեան դոգման էր: Յիրաւի նա տանը մի հրէշ էր: Երբ վեր կենար անկողնից, ամբողջ տան մէջ և բակում բերնէ բերան կանցնէր շունչով:

—Վեր է կացիլ:

Թէ ով էր վեր կենողը, աւելրսդ էր հարցնել: Բոլորին հասկանալի էր լինում այդ սոսկալի վսփսուկի առարկան:

—Երեսը լուանում է, շուտով գուրս կըդայ...

Գալիս էր երկրորդ լուսը՝ աւելի տպաւորիչ, աւելի երկիրակի. Վերարկուն հազնելը ամենից երկիրածութեամբ էր ընդունում. ծառաները զոների ճեղքուածներից դողալով դիտում էին, մինչեւ որ հրէշը վրուած գուրս էր գալիս փողոց, ատանելով իւր հետ բոլորի սարսավին ու սեեռած հայեացքները. այստեղ միայն բոլորը մէկ անգամ ազատ և խոր շունչ էին քաշում և գործի կպչում:

Բայց այն օրը սաստիկ ուրախ տրամադրութեան մէջ էր Բոռնցքեանը: Առաւատեան համբուրեց, գուրգուրեց երեխաներին, սիրալիր կատակներ արաւ կնոջ հետ: Ծառաներին անգամ չմոռացաւ բաժին հանել այդ հազուագիւտ շնորհներից:

Տիկին Բոռնցքեանը դարմացել էր: Միթէ սա իւր մւայլ ամուսինն է:

—Կարապեա... ասաց ու չկարողացաւ խսկոյն վրայ բերել:— Կարապետ, ինչ կըլինէր բոլոր առաւատեաներն այսպէս լուսանային մեզ համար:

Կարապետը ժպտաց. այդ ժպիտը կարճ էր և ժլատի որքան թանկ է լինում բռնաւորի ժպիտը, թէկուզ ամենաժլատ ժպիտը: Բարի մարդու հարիւր ծիծաղ ու քըքիջը բռնաւորի կէս ժպտի տեղը շեն կարող բռնել:

—Ի՞նչ կլինի, որ մեր աղէն ամեն օր այսպէս լինի, վագելով խոհարարի մօտ, ասաց սպասաւորը.—էս ըոպէին խանումի մօտ նա իմ ուսին խփեց և ժպտաց:

—Տեսնես ում տունէ քանդել, պատասխանեց խոհարարը անտարբերութեամբ, շարունակելով մաքրել ձեռքի կանանչին:—Նա ուրախ է լինում սովորաբար, երբ մէկին մեծ վնաս հասցրած է լինում: Ինչ բարի պտուղ աղա ես գտնել:

—Ասում էր՝ երեկոյեան մեծ խրախճանք է լինելու, պատրաստութիւն տեսէք: Դէ պատրաստուիր, որ հետաք գնալու ենք շուկայ:

—Ուրեմն սխալուած շեմ.—ասաց խոհարարը ծոծրակը քուելով.—հապա մի դէնը նայիր և ականչ դիր:

Հարեւան խրճիթի շէմքին նստած էր մի շորացած պառաւ, որ ձեռքերը մերթ դէպի Բոռնցքեանի տունը, մերթ դէպի երկինք տարածելով անէծքներ էր կարդում:

## Բ.

Բոռնցքեանի բնակարանը տօնական տեսք էր ընդունել: Հանդիսամուռքի առաջ կախ արած մեծ լապտերը լուսաւորում էր խաւար բակը, որի խորշերն ու անկիւնները կարծես ապշած մթան միջից չուել էին իրենց աշքերը, տեսնելու այդ անօրինակ երեսոյթը: Բոռնցքեանի տանը խրախճանք կար: Նա մտածել էր առաւտեան գոյնզգոյն լապտերներ էլ վառել տալ, որպէս զի տպաւորութիւնը հիւրերի վրայ աւելի մեծ լինի, բայց ով զիաէ ինչ մտքեր ու ենթադրութիւններ խափանել էին այդ որոշումը: «Պէտք չէ», վճռել էր նա ձեռքը թափ տալով, և գոյնզգոյն լապտերները շէին վառուել: Հիւրերը զեռ չէին հաւաքուել, բայց կենդանութիւն էր տիրում տան մէջ: Տան ծառաները դուրս ու ներս էին անում շարունակ: Տանտիկինը հանգիստ չէր տալիս նրանց: «Փոշի նստած կլինի, կըրկին սրբեցէր» հրամայում էր նա ժամէ ժամ: Եւ ծառաները, տեսնելով, թէ ինչպէս ի չալին է գործ զնում այդ կինը իրենց աշխատանքը՝ միտնգամայն զնուած ամսական չնչին վարձով, ճշմարիտ է, կատարում էին հրամանները, բայց ամեն անգամ մտքերում հայհոյելով և շար դև համարելով այդ հրեշտակային հանդերձ հագած կնոջը: Բայց տանտիկինն էլ հանգիստ չէր. նա անդադար մի սինեակից միւսն էր

տնցնում, դիտում բոլոր կահկարասիքը, այլք ու սարքը—պակասութիւն խօ չկայ: Եւ երբ գտնում էր որ չկայ, գոհունակութեան, բաւականութեան զզացումը ընդգրկում էր նրան և նա սկսում էր թռչկոտալ: Այստեղ միայն իւր բոլոր ոյժով երեան էր գալիս տիրոջ և ծառայի մէջ եղած անդունդը—մի տեղ յոգնածութիւն, տրտունջ, զայրոյթ, միւս աեղ՝ երջանկութեան զիտակցութիւն, ժախտ, թռչկոտում: Եւ այս վերջնները միախառնում էին գեղեցիկ կահկարասիքի հրտապորիչ փայլի հետ:

Հողերմայլութեան այդ վայրկեանին ներս մտաւ Բոռոնցքեանը և կամաց կանգնեց զռան չէմքում: Տիկինը յետ նայեց և կամաց կանգնեց. այդպէս երկար դիտում էին իրար: Բոռոնցքեանն այստեղ էլ ցանկացաւ բանեցնել իւր քաղցրախօսութիւնը՝ զուցէ առաջին անգամ իւր կեանքում իւր տան մէջ:

—Այս երեկոյ ինչ լան և երեսում, Սոնա, ասաց նա մի ձայնով, որ չնորհիւ թափուած ատամների շատ անհաճոյ էր լսում: Ապա մօտեցաւ և բանեց կոնջ ձեռքը:

Կինը զարմացել էր:—Միթէ սա այն յօնքերը կիտած մարդը չէ, որի ստուերն ամենը իրայ սարսափ էր բիսում:

—Կըզարմանաս, բա ինչ կանես: Ուրախ եմ, զարմանում ես: Բաս ի՞նչ, ուզում էիր, որ տմբողջ կեանքում հրէշ լինիմ քեզ համար: Ես սպասում էի, մի մեծ բանի էի սպասում, որին արդէն Աստուծոյ ողորմութեամբը հասել եմ, այժմ քէփ արա, Սոնա ջան,—ասաց և գրկեց ամուսնուն:

Սոնան մի յանկարծական զզուանք զգաց դէպի այդ մարդը, որի ուսախութիւնը կասկածելի էր թռում նրան, աւելի չտրախմնդութիւն, քան իսկական անմեղ ուրախութիւն: Յաջողութիւն է գաել, ուրախութիւն է անում և մի փորբիկ, աննշան բաժին հանում մեղ զբանից, իսկ եթէ կրկին անիւը շուռ գայ, այնուհետև զարձեալ տանջանք: Ինչ զիւական ընաւորութիւն: Ինչ յաջողութիւն ու վայելը, երբ այդ վայելքի տէրը ուրիշն է, իսկ մենք անօրինաբար սեպհականել ենք այն, իսկ այդ ուրիշը մի աւերուած իրնիթում օրն ի բուն մեր դիմացը բուի նման պիտի կանչէ:—Կին մարդու զգայուն սիրտն էր նրա մէջ խօսողը, այդ սիրտը շատ անընդունակ է բացուելու. նրա զռները հաղիւ են բացւում, բայց երբ բացւում են, գերագասում են տասնեակ տղամարդկանց սրտերին: Սոնայի սիրտն այս անգամ բացուել էր. նա մոռացել էր ամուսնու անսպասելի տրամալրութիւնը:

—Անիմիդն մարդ, մտածում էր իտ:—Այս ինչ արի, Կարապետ,

դարձաւ նա լսելի ձայնով, որի մէջ թէ սպառնալիք կար և թէ պաղատանք.

—Ի՞նչ արի որ, չգիտե՞ս ինչ տրի:—Սեպհական տուն տուի քեզ:

Սա մերը չէ, լսում ես բուի ձայնը, ես վախենում եմ, որ տունս վերջապէս բուի բնակարան կըդառնայ:

—Մերը չէ, մեր երեխայինն է:

Այստեղ արդէն լսեց Սոնան: Երեխայի մասին գես երբէք այնպէս չէր մտածել, ինչպէս այժմ մի քանի բոպէի ընթացքում: Զարատանչ մաքեր եկան պատեցին նրա հոգին: Եթէ այդ միակ երեխան չլինէր, էլ ինչին էր պէտք նրան տուն-տեղ: Կարապեան այդ բոլորը երեխայի համար է անում: Իսկ ումն է երեխան, ինքն անծնունդ է. Այս իրականութիւնն էլ ժայռի պէս ցցուց նրա առաջ և մարզն աւելի յանցաւոր, մեղսալից թուաց նրան: Մէկ էլ նայեց երեխային՝ այդ նորարորդոջ պատանուն: որ դէպի նա էր գալիս և վճռեց, որ յիրաւի նա իւրն է, որ նրանից բաժանուել չի կարող և որ ամուսինը ամեն ինչ կարող է անել այդ երեխայի համար, թէկուղ նոյն իսկ մեղը, յանցանք լինի այդ: Բայց այդ բոպէին հարեան պառաւի ողբը կրկին նրա ականջին հասաւ:

—Ոխ, Կարապետ, Կարապետ: Երեխային մենք սիրում ենք: Նա ինձ համար որդի է և ես նրա համար մայր: Բայց ի՞նչն է ստիպում քեզ իւր իսկ ձեռքելով ծեծելով դուրս անել տալ մեր բակից իւր մօրը: Իսկ տոննը:

—Դէ քեզ էլ կասեմ, պառաւին էլ, երեխային էլ: Էլի արինս պղտորեցիր: Զայնդ կտրիր կորիր, մարդիկ են գալիս:

Նրա դէմքը փայեց մի դիւական խորամանկութեամբ և սլանալով կոնջ ետեկից ու ձայնը հուզ տալով աւելացրեց:

—Երեխան ի՞նչ եմ անում, նա օտար է, օտար, հասկանո՞ւմ ես: Ինձ տուն ու տեղ էր հարկաւոր, տուն ու տեղ: Դէ հասկացիր այժմ:

Գ.

Սըհեստաւորների աւագ Մարտիրոսին ով չէր ճանաչում քաղաքում: Նա բարի հոչակ ունէր թէ մեծի ու փոքրի, թէ հարուստի ու աղքատի առաջ: Հարուստը նրան ճանաչում էր, որովհետեւ ամեն անգամ ուրախութեան ու տրամութեան միջոցին տեսնում էր նրան իւր տանը՝ իւր բաժինը պահանջելիս-խեղճերի ու տնանկների բաժինը: Իսկ աղքատը հօ լաւ պիտի ճանաշէր նրան, քանի որ նեղութեան միջոցին, երբ մարդը անօգնական ու անճար բաց է անում աշքերն անողոք իրակաթեան առաջ, միմեայն նրան կարող էր զիմել և

օգնութիւն ստանալ: Խսկ ինչու նա այդպէս բարի է, հարց էին տալիս իրար բարերարուածները:

—Այդ մարդու սիրտն էլ այդպէս է, ասում էր մէկը:

—Ամբողջ քաղաքում հնաց միայն մի ուստա Մարտիրոս է. ինչու ուրիշներն էլ չեն անում, միթէ նրանց սիրտը չար է, վրայ էր բերում միւսը:

—Իրա փողով հօ չի անում. հաւաքում է ուրիշի փողով բարիք գործում-խօսում էր ապերախտութիւնը երրորդի մէջ:

—Զէ, ախտէր, ոչ այս է, ոչ այն: Ասում են, որ ուստա Մարտիրոսը լաւ ազգից է եղել, շատ և շատ ունեոր մարդ, մեծ վաճառական, Մարսէլ, Մոսկով, Թաւրիդ առուտուր անելիս: Այն ժամանակը ի հարկէ ուտառ չի եղել, այլ կուպեց: Բայց բախտը շուռ է գալիս, կոտր է ընկնում. ինչ անի, ինչ չանի, գալիս ու արհեստ է սովորում. Խօսքը մեր մէջ մնայ, խակի լաւ մարդ չէ եղել. բայց կոտր ընկնելուց յետոյ խելքը գլուխն է գալիս, Աստուած միան ընկնում ու էն օրից էսօր մոռանում է վատութիւնը և Աստուծոյ ճանապարհն ընկնում:

—Ասում են իւր աշխատանքից էլ բաժին է հանում խեղճերին:

—Բայց ինչպէս փոխուեց է:

—Աստուծոյ մատը խառն կինի.

Եւ բարութիւնը, ընկերոջ-գրացուն օգնելը քրիստոնէական այդ ամենամեծ առաքինութիւնը, որը իրաքանչիւրի պարտականութիւնը պիտի լինի, մի հանելուկ էր երեսում նրանց:

Հնց այդ առեղծուածային հասկացողութիւնն էր, որ նրան օգնել էր երկար տարիներ յարգանք վայելել բոլորի կողմից և առաջ առանել մարզափրութեան վսեմ գործը: Նրա դիմումը անհետանք չէր անցնիլ: Մի ուրախութիւն չէր լինի, որին մասնակից չանէին նրան: Յուցակների մէջ առաջին տեղը նրա անուանն էր պատկանում, և առաջին հրաւէրը նրա տունն էր գնում:

Բոռնցքեանն էլ այդպէս էր արել: Ուստա Մարտիրոսը ազգեցիկ մարդ էր, կարող էր նրան երբ և իցէ պէտք գալ. աշխարհը է, չի իմացուիլ, «ատուած քարն անգամ կարող է որմի գլուխը բարձրանալ». իսկ ուստա Մարտիրոսը հօ ատուած չէ, այլ յարգուած: Բաւական է նա Բոռնցքեանի լաւը խօսէր, և ամբողջ քաղաքը նոյնը կըկլինէր: Ուստի նա էլ առաջին հրաւէրալների ցանկը մտաւ:

—Գեադան թէս լաւ մարդ չէ, մտածում էր նա հրաւէրը ստանալուց յետոյ, բայց հարուստ է: Իմ գործն էլ ամինից աւելի

դրանցից է կախուած, փողի պէտք ունենալիս կարող եմ օձիքից կախ ընկնել: Գնամ:

Ու գնաց: Գնաց այն մաքով որ կարողանար երբ և իցէ նրան ձեռք մեկնել. նա չգիտէր Բոռնցքեանի խրամանքի առիթը. եթէ գիտենար, գուցէ չգնար իւր «սիրաը քանդելու»: Ավականութեան կեղտի առաջ նա լուղը չէր. Կեղտը պէտք է մաքրել. լուռթիւնը յանցանը է: Միակ բացարձակ լաւութիւնը պիտի արիէ աշխարհում.

—Աշխարհում միայն լաւութիւնն է մնալու: Եթէ արար-աշխարհն էլ սեպհականենք, մեր բաժինը այդ բոլորից միմեայն մի թիղաչափ հող և երկու զազ կտաւ է մնալու: Խսկ լաւ յիշատակը ոչ մի բանով չի կարելի փոխարինել:

Այս մտքերը և Բոռնցքեանի մասին տարածուած լուրերը վերլուծելով ու իւր վախճանական փիլիսոփայութիւնը մտմտալով նա մտաւ Բոռնցքեանի դռնով:

Առաջին տպաւորութիւնն ապշեցուցիչ էր, թէս ուստա Մարտիրոսի նման մարդկանց համար այդ անցաւոր բաները լոկ թիթեածիտի առարկայ կարող են լինել: Լուսածաւալ սենեակներ ոսկեղոծ պատերով, թիթեղեայ ոսկեփայլ կանթեղներ ու ջահեր, ուրախ և գեղածիծաղ գէմքեր—մի ըստ ամենայնի հաճելի իրարանցում: Ուստա Մարտիրոսի երեալովը իրարանցումը փոքր ինչ նուադեց, քըքիջն ու ժպիտները մի վայրկեան յարգանքի փոխուեցան ողջոյներով ու մեղմ ձեռքի սեղմումներով: Տիկիններն էին միայն, որ շարունակում էին իրենց սէկ ճեմը: Բոռնցքեանն առաջ վազեց ու մի քանի անգամ թօթուեց նրա ձեռքը:

—Բարով հազար բարի, ուստա Մարտիրոս, ինչ քէֆի ես: Դէ, համեցէք վերեւ Այ, այստեղ նարդի են խաղում, կուզես թամաշարա, խսկ ես գնամ տեսնեմ խօսա-րախա ինչպէս են:

Ուստա Մարտիրոսը բոլորին բարեկելուց յետոյ նսաեց, ձեռքերն իրար շինեց մի քանի անգամ, ապա բեխերը ոլորեց, միբուքը շտկեց և հնաց ուզում էր մի ընդհանուր հայեացք ձգել զահլիճին, զեռ շունչը տեղը չէր եկել, որ ծառան թէյը բերաւ և չսպասելով որ հիւրը ինքը վերցնի, առաւ մի բաժակ, առաջը դրաւ, հիւրը չուլսաւոր էր, կարելի էր այդպէս վարուել:

—Չէր օխնած, դէ թող շունչներս առնենք է:

Դ.

Նարդու չըխկողը բանել էր ամբողջ դահլիճը: Խաղում էին մի նորատի տիկին և մի երիտասարդ՝ հաւանականօրէն մօտիկ ծանօթ-

Ներք: Հատաքըքսուղների մեծ բազմութիւն էր խմբուել նրանց գլխին: Հետաքըքսուղների շարժողը նրանց ընդունակութիւնը չէր, այլ այն, թէ բախտը որին պիտի ժամանակը, որին երջանկացնէր: Սկզբում տիկինը վաս գրութեան մէջ էր, բայց երբ հրամայեց զաւերին «գու շեշ» (բառակուսի վեց) և անշունչ ոսկրիկները նրա նրբանչիւն ձայնի տակ գըլորուեցին տախտակի վրայ, արտաքերելով նրա ցանկացածը: Խաղը բոլորովին փօխուեց, տիկնոջ խաղին հետեւող մի քանի յուսահատ դէմքեր ուրախ ժամաներ ձեւցըին: Տիկնոջ դէմքը պարզուեցաւ, վրդովմունքից զգալի կերպավ բարձրացած երակներն իջան, քրտնաթոր կարմրութիւնն անցաւ: Կրկին պիտի ձգէր զառերը, հակառակորդը խաղացել էր արդին ի հարկէ անյաջող ի մեծ ուրախութիւն շրջապատղների, որոնք այնքան էին ոգեսրուել, որ գրեթէ ովացիաներով էին ընդունում տիկնոջ իւրաքանչիւր յաջողութիւնը:

—Ֆէնջ ու չհար (հինգ և չորս) կանչեց մէկն ինքնամոռացութեան մէջ, երբ տիկինը ձգեց զառերը: Դա արդին վերջին հարուածը պիտի լինէր: Հակառակորդը պիտի զինաթափուէր ու ձեռքերը ծալէր նստէր: Այդպէս էլ եղաւ, ցանկացած զառը եկաւ, երիտասարդի միակ քարը դուրս հանուեցաւ, նա երկար պիտի սպասէր մինչեւ տեղ բացուէր: Տիկնոջ այդ յաղթանակի վրայ դաշիճը թնգաց «ուռա»ներով, ապա փոքր ինչ յետոյ որստաց «մարս»: Յիրաւի, կարծես պատերազմի աստուածը օգնում էր տիկնոջը խաղի մէջ: Հակառակորդը նստած էր լուռ, մեղմ ու խաղաղ, կասես նրան չէին վերաբերում բախտի այդ խաղերը, որոնք մարմնացել էին այստեղ՝ նրկու կտոր տախտակի և երկու սպիտակ ոսկրիկների մէջ: Կեանքի կրիւն էր շարունակում այստեղ, այն օրհասական կրիւր, ուր մինչեւ չի փշում վերջին շունչը, չէ խորտակում յօյսը, բայց ուր խեղճի յաջողութիւնը վիշտ, իսկ ուժիկինը ուրախութիւն, քըքիջ է պատճառում հանդիսատեսին: Ներկայ դէպքում այդ ինստինկտը աւելի ևս անողոքաբար էր յայտնում, քանի որ անզօրը անհրապոյը մէկն էր, իսկ յաղթանակողը՝ մի կին, մի քնքոյշ, ամենասառն գէմքերի վրայ անգամ վեղեցիկ ժամաներ ծնեցնող արարած:

Ուստա Մարտիրոսը տեսնում էր այդ բոլորը, և քանի աւելանում էր հանդիսատեսների բերկրանիքը զօրեղի յաջողութիւնների վրայ, այնքան աւելի մուայլում էր նրա դէմքը, կնճիռները ամպերի նման խտանում, ասես շանթ ու կայծակ բեղմնաւորելով իրենց մէջ:

—Զարմանալի է աշխարհիս բանը—ասաց նա յանկարծակի՛ ուղղուելով իւր տեղում և խոր հառաջելով: —Մէկը չեղաւ, որ մի

բարի ցանկութիւն էլ այդ պարոնի համար արտայայտէր: Խոկ զբանյաջողութիւնները հօ բոլորն էլ տեսնում էին: Այդպէս է աշխարհը. խեղճը, զրկուածը, կարօտեալն անօդնական է մնում, իսկ անկարօտը, զօրեղը բոլորից յարգուում, նոյն իսկ ամենքը նրան որ և է կերպով ծառայելը պատիւ են համարում: Բայց քէփդ մի կոտրիր,—աւելացրեց նա կատակով, մեղմ չոյելով նրա թիկունքը,—մերն էլ Աստուած:

Երկրորդ անգամ սկսեցին խաղալ: Յաջողութիւնը դարձեալ տիկնոջ կողմն էր: Դարձեալ ամենքի ուշագրութիւնը նրա կողմն էր: Երբեմն-երբեմն լուսում էին կեցցէներ: Մի չարաբաստիկ զաւ սակայն միանգամբ լուցը բոլորին և հիմնայտակ արեց գործը:

—Դէ եկ է, —գուրա ժայթքեց երիտասարդի կրծքից, հոգիս հանեցիր այսքան ժամանակ:

Տիկինը գունատուեց: Հետագայ զառերը չօգնեցին նրան: Երկրապատւներից մի բանիման արդէն թողել էին նրան, մի քանիսն էլ կամաց-կամաց ուղղուում էին երիտասարդի կողմը: Մնացել էին նրանք, որոնք տիկինների մէջ մոայլութիւնը կամ սանտիմենտալ տրամադրութիւնն էին զնահատում:

—Որ ասացի մերն էլ Աստուած,—ասաց ուստան անտարերութեամբ: —Բայց ինչպէս ուզում ես զի՞ր՝ զէս փոխիր, զէն փոխիր, այնուամենայնիւ մենակ մնացողը՝ խեղճն է, սնօդնականը՝ խեղճն է: Զօրեղն ամեն տեղ էլ օգնական ունի:

—Դու այդպէս չես անում, ուստա, —առարկեց մի երիտասարդ: —Ախր ինչ անես, երբ մէկն ընկել պրծել է: Հնց պարզ ասենք՝ աղքատը կընարստանայ, անդանդ ընկածը զնւսու կըզգայ:

—Բա քու տոննը շինուի: Եարաք մեր ժամանակի բոլո՞ր ջահելներն այդպէս են մտածում: Եթէ այդպէս է, բայց շատ ողորմելի ժամանակում ենք ապրում: Քվիստառ ինչ էր ասում: —իննուննեիննը թող և մի կորածի եսեկիցն զնա: Եթէ ձեռք մեկնենք անդունդ ընկածին, կազատենք նրան, եթէ օգնենք աղքատին՝ կարող ենք հանել նրան խեղճութիւնից: Միթէ ինձանից պէտք է լսես այս խօսքերը, երիտասարդ:

Բուռնցըեանը, որի զէմքը վերջին խօսքերի ժամանակ մի քանի անգամ փոխել էր գոյնը և վերջապէս կասկարմիր կտրել, լուս ու մունչ հետացաւ: Խեղճի խայթոցիցն էր վախչուում, թէ ամօթից խուսափում: Լինում են բոլէներ, երբ քար կտրած սիրտն անգամ փափկանալու արամազդութիւն է ցոյց տալիս. բայց երբ նրան պարփակող կայանն անընդունակ է լինում այդ յեղափոխութեան, աշխատում

է խուսափել ամեն մի փափկացնող երեղյթից. Խոյս տալը՝ խիղճն ալիդ տեսակ վատանգներից պաշտպանելու դիտաւորովթեամբ, ամենից հեշտ բանն է այդպիսիների համար: Եւ Բոռնցքեանը խոյս տուեց: Բայց ուստա Մարտիրոսի խօսքելն ապաւաժի վրայ չէին ընկել— դահլիճում մի իրարանցում, մի շշով քարձրացաւ:

—Այս ո՞րաեղ ենք, հարցնում էր բոլորից ներքին մարդը:  
—Հիւր ենք եկել, պատասխանում էր փորձիչը.

—Ում մօտ...

Այստեղ լուսութիւն էր տիրում: Իրար ականջի էին ընկնում, ապա կասկածի տեղիք չաւալու համար ժպտալից հայեացքներ ուղղում այս ու այն կողմ, ողջունում նրանց, որոնց առաջին անգամն էին տեսնում, կրկին կռանում ու փափսում, վերջապէս իրար թափանցող աշքերով քննելով:

—Տէրն իրեն հետ,—ասում, հառաջում և ծածկում էին ներքին մարդու երեսը:

«Տէրն իրեն հետ» լսում էր զանազան կողմերից յօրանջումների, շշովիների միջից: Դա է ժամանակակից քաղաքագէտ մարդու դաւանանքը, որը գիտէ կրօնով վարագութել իւր դատապարտելի արարքներն, երբ խիֆճը իւրն է պահանջում, իսկ ինքը կասկածում է Աստուծոյ գոյութեան վրայ. երբ լուր է ներքին մարդը, և սանձարձակ գործում է գաղանը:

Ուստա Մարտիրոսն այնպիսի սերմ չէր ձգել սակայն, որի ծիլն իսկոյն չորանար: Բարի սրակին անգիտակցարար դուրս են զեղում այն բոլորը, ինչ նեղութիւն է պատճառում նրանց: Ուստա Մարտիրոսին այստեղ յայտնեցին բոլորը... Մի ծերունի անկիւնը քաշելով նրան, պատմեց ինչ գիտէր այս տան մասին:

—Բոռնցքեանի որդին իրենը չէ, այլ հարեան պառաւինը՝ մեծացնելու պատրուակով վերցրուած, բայց յետոյ խլուած իսկական ծնողից: Այժմ հարազատ մայրը, որ այնուհետեւ ուրիշ զաւակ չէ ծնել, չի կարողանում աեսնել իւր որդուն. հարազատ որդին խորթ ծնողների զբդամբ դանակներով է հալածում իւր մօրը, չթողնելով նրան ներս մտնել տան դռնով: Այդ գեռ քիչ է. մի փաստաբանի միջոցով բանն այնպէս են սարքել, որ պառաւի գեղեցիկ գեախնը սեպհականել են և նրա վրայ այժմեան հոյակապ տունը կանգնեցրել: Պառաւը դատ է սկսել, օրն ի բուն անիծում է իւր տունն ու օջախը քանդողին: Դատ... բայց դատերից քանին արդարութեան կողմն են վճռուում. ոսկին սել սպիտակ է դարձնում, պառաւը զրկուում է իւր գեանից: Այդ նոր է վճռուել և այսօրուայ խրախնաքը այդ յաղթանակի համար է սարքուած:

Ուստա Մարտիրոսը մնացել էր ապշած: Նա միայն կարողացաւ ձեռքի ափերն ամսուր իրար զարկել և երկու ձեռքերը դէպի երկինք ուղղել ու լուռ մնալ: Երկի զարմանում էր, որ տաւնը փուլ չէ գալիս և բոլորին իւր տակն առնում:

—Ուստա կոտրուած լինէր չգայի, շըհնջաց նա ծերունուն, գլուխն օրօղելով:

Մինչ այս, մինչ այն, միւս ընդարձակ սենեակում սեղանը պատրաստել էին և հիւրերը կամաց-կամաց խմբում էին այնտեղ: Ամենից վերջինը Ուստա Մարտիրոսը և ծերունին ներս մտան: Ամենքն էլ տեղաւորուեցան և սկսեցին ճաշակել ըստ ամենայնի լիքը և շքեղ սեղանից:

Մինչեւ կառավարիչ ընտրելը Բոռնցքեանը բաժակը վերցրեց.

—Խմենք այն մարդկանց կենացը, որոնք կարողանում են յաղթել բոլոր դժուարութիւնները: Ցանկամ, որ բոլորն էլ կարողանան այնպէս յաղթահարել խոչնոտները, ինչպէս ես:

Ուստա Մարտիրոսը կիմնայէր, բազմութեան մէջ կլոէր և առանձին կիսուէր Բոռնցքեանի հետ, բայց որա յոխորտանքը թոյն ածեցին նրա վէրքի վրայ: Կարծես մէկը խառնշառը նրա ներսը և նա մէկն վրայ բերեց հանգարատօրէն.

—Ամօթ չէ, անօրէն:

Բոլորը սառան, լուսութիւնը տեեց երկու բոպէաչափ:

—Էդ ինձ էս ասում, ուստա Մարտիրոս:

—Այն քեզ: Բաւական չէ տուն եռ քանզել, պարծենում էլ ես, միւսներին էլ նոյնն ես ցանկանում: Բաս Աստուծ շկայ գլխիդ վերեն:

—Ճանաք հօ չես անում, ուստա Մարտիրոս...

—Ի՞նչ հանաք, օրհնուած, միայն դու կարող ես չսել այն աղիսարը կոծը—բնաւեր ճնճղուկի կոծը:

Ցիրաւի զրմից լսում էր պառաւի կոծը:

—Միայն դու ես, թէ ուրիշն էլ կայ, հարցրեց Բոռնցքեանը շփոթուած:

Բոլորը լուռ էին, ձայն հանող չկար:

—Բաս իմ հայցը քո աշքերը չի բռնիլ:

Այդ խօսքերը, որոնց մէջ թէ սպառնալիք կար և թէ աղաչանք, մի աննկատելի իսպառնցամ ձգեցին սեղանակիցների մէջ: Դարձեալ շշունչ, դարձեալ փոփուկ:

—Ի՞նչ է, եկել է հիւր, թէ մարդուն խայտառակելու, լսում էր այս ու այն կողմից:—Ուստա Մարտիրոս, ամօթ չէ, մեծ մարդ ես:

—Տեսմք, սեղանակիցներ, ինչ ասաց ինձ այս մարդը: Նոսուրութեամբ զբարտեց ինձ, վկայ եղէք: Դէ, ուստա Մարտիրոս, վեր կաց և դուրս գնա իմ տնից: Ես սխալուել էի, ներեցէք, թանկազին հիւրեր: Ներում եմ քեզ, ուստա Մարտիրոս, թէն կարող էի դատի մատնել, այս էլ կարծեմ բաւական է, որ այսշափ բազմութեան ներկայութեամբ դուրս եմ վանդում քեզ տնից: Թող այդ լինի քո պատիժը:

Ուստա Մարտիրոսն էլ լուռ էր և զայրոյթով լի աշքերով նայում էր բոլորին—մենակ է արգեօք, թէ կան մարդիկ, որոնց մէջ նրա սերմերը ծիլ են առւել, ուռճացել:

—Ո՞վ է մեղապառմ ինձ, որոստաց նա:

Դարձեալ խիղճը զարթնեց, լուռթիւն տիրեց, գլուխները գետին խսնաբհուեցան, բայց սեղանի փայլը, «աղ ու հացը» խլացրին ներքին մարդու ձայնը:

—Գուրս, գուրս, ուստա Մարտիրոս, դու արժանի չես մեզ հետ նստելու:

Եւ բոլորը կրկնեցին այդ մէկի խօսքը մերենաբար: Միայն տիկին Բառնցքեանն էր լուռ, ձեռքերը կրծքին ծալած: Նա էլ հառաչեց ու վեր կացաւ գուրս զնաց:

Ուստա Մարտիրոսն էլ վեր կացաւ և փոքր ինչ կանգ առնելուց յետոյ առանձնացած զրութեան մէջ՝ միւսներից հեռու՝ ինչպէս օտար, ասաց գողգողակ յուզմունքից.

—Ես դուրս եմ գալիս, բայց հասատում եմ, որ խղճի աղաղաղակը չի լուիլ, մինչեւ արգարութիւնը չվերականգնուի: Անարդարը միշտ իւր պատիժը պիտի կրէ, վաղ թէ ուշ: «Զիք ինչ ծածուկ, որ ոչ յայտ լիցիր»:

Ու դուրս գնաց հանդարս քայլերավ, այն գիտակցութեամբ, որ մի քիչ անյարմար ժամանակ, բայց և այնպէս մի արդար գործ կատարեց, մի գործ, որ չէր կարող չկատարուել, թէն կատարողը միմեայն մէկն էր. որին ոչ միայն շհաւատացին, այլ դուրս վանդեցին իրենց միջից:

Բոռնցքեանի վրայից կարծես մի բեռ վերցրին: Նա աղատ չնշել սկսեց.

—Հարիւրից աւելի մարդ կայ իմ տանս. իսկ այդ մէկը փոխանակ չնորհակալութեան, անպատութիւն և վիրաւրանք հասցրեց ինձ: Բայց ոչինչ, հոգ չեմ անում, միայն թէ «մէկը» լինի և այն էլ մի ուստաս: Բայց վերջ տանք այս հարցին և շարունակենք քէֆը:

Ու շարունակեցին, կարծես ոչինչ չէր պատահել փոքր ինչ առաջ այդ տան մէջ:



## Ն Ո Ր Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ Ի Ն

### Ա.

Նոր ճանապարհ էինք գնում... Աղատ էին թողել մեզ, պէտք էր գնալ, ման գալ, նոր աեղիս աշխարհներ տեսնել: Եւ փուշ ու աստատկ չկար այդ ճանապարհին: Տակներս լեռնադաշտակի կրծքում ապաստան գտած գեղագիր լճակի վճիտ ջուրն էր, չորս կողմերը գեղեցիկ կոյսերի նման պար բռնած կանչազգեղ սիրուն լեռնաշղթաները. ամեն ինչ ծիծաղում էր մեր գէմքերին—թէ վառ արել իւր եթերային խաղերով անհուն կապոյտի հետ, թէ կալուտաչք լիճը իւր հանդարտ կոհակներով և թէ դալար լճափը: Սև, մաշուած նաւակն անգամ, լեռն լերկ կատարն անգամ մեր հայեացքը գրաւում, մեղնից ժպիտ էին խլում, օրեվինեան առաջին նոր ճանապարհն էինք զնում, չգիտէինք ինչ է կեանքը, զառն կեանքը: Երեքս էլ մատաղ էինք. ուրախ, երջանիկ էինք դգում մեղ: Կեանքի հոգսը չէր մեզ այդ ճանապարհը հանել. մենք ճանապարհորդում էինք, գնում մեր բաւականութեան, մեր վայելքների ետեկից և բնութիւնն էր այդ վայելքների առարկան, ուր խաղում էինք աղատ, ինչպէս ձկները աղատ լին մէջ.

—Հիանալի է, դուրս թռաւ բերնից անգիտակցարար, երբ յանկարծ ջրերի հանդարտ մակերեռոյթը զգալի կերպով խանգարուեց մեր զիմաց. ձուկն էր, որ վեր բարձրանալով պոշով խփել էր ջրին և դարձեալ խորպերը սահել:

—Հրաշալի է, վրայ բերաւ Վահանը, շարունակերով աշքերը յառել այն կէտին, ուր երկացել էր ձուկը.—ինձ թռում է, որ մարդ երբէք, երբէք շպիտի ձանձրանայ ապրելուց, մանաւանդ այսպիսի վայրերում, ուր նա մի աղատ ձուկ է բնութեան ծովի մէջ, մի բազէ՝ լերան կատարին: Բանտ էլ լինէր կեանքը, ես ուրախութեամբ կապըէի այդ բանտի մէջ, միայն թէ այս գերահարաշ վայրում լինէր այն:

—Այդ ինչ ասացիր, Վահան,—խօսեց հանդարտ մեր միւս ընկերը՝ Յակովը, որ մինչև այդ ժամանակ նաւարկութեան ամբողջ ընթացքում լուռ էր: Նա դիտում էր ամեն ինչ, և դէմքի արտայայտ-

թիմներից երեսում էր, որ ոչ մի բան չէր խուսափում նրա հայեացքից, այքնան բազմազան էին այդ արտայայտութիւնները:

—Ես առում եմ այն, ինչ կուզէի լինել. ի՞նչ է մեր կեանքը չորս պատերի մէջ: Ժտմանակի և տարածութեան ամենափոքր շափերի համաձայն կտրատած և նրանց գերի տուած մի գոյութիւն: Բանտ չէ, հապա ի՞նչ է:

—Ուր ենք գնում մենք, Վահան: Առաջին նոր ճանապարհն ենք գնում, նոր աշխարհներ տեսնելու ենք գնում: Ես տեսայ, որ քո նոր աշխարհը քո վայելքն է. բայց կեանքը, մեր շորս կողմի կեանքն է. մեր նոր աշխարհը, որը գիտելու ենք գնում: Բնութիւնը մեզ գրաւում է, ճշմարիտ է. ես ինքս էլ հրճում եմ Աստուծոյ այդ սրանչելի հրաշակերտով. բայց նայենք հենց մեր առաջ նստած նաւազարին և տեսնենք նա էլ հրճում է...

—Ի՞նչ, դուք կարծում էք նա իրեն պակաս երջանիկ է դգում, վրայ բերեց Վահանը: —Ես ուրախութեամբ կհամաձայնէի հայի գնով նաւազար լինել:

—Աւելորդ եմ համարում նաւազարից հարցնել—ընդմիջեց Յակովը. —բաւական է նայել նրա դէմքին ամեն անդամ, երբ նրա թեւերը միօրինակ շարժումներից յոգնած կախ են ընկնում, երբ ուժերի աւելորդ սպառումից քրածինքը ծծուկ-ծծուկ գուրս է տալիս ճակատին և արեի տակ այրում դէմքը և այդ օրեր, տարիներ, գուցէ և տասնեակ տարիներ շարունակ. —բաւական է ասում եմ այդ բոլորը ի նկատի ունենալ և կհամոզուի մարդ, որ բնութիւնը նրա համար գրոց շարժէ, քանի որ նրան քրածինք սրբել է պէտք, և վերջապէս ցանկութիւն ունի, որ մէկ անդամ էլ ինքը նաւ նստէ և շուրջը դիտէ ու ես կամ դու թիավարենք: Տես որքան քրածած է, յոգնած, բայց չի կարող հանգստանալ, որովհետեւ, ինչպէս կողում ասացին, օրուայ այս ժամին ահա այն ժայռի դիմաց միշտ ալեկոծութիւն է լինում և նաւը կարող է խորտակուել, եթէ ժամանակին շանցնենք: Պէտք է ոյժերը լարել ուլեմն:

Յիրաւի նաւազարները հետզհետէ աւելի թափով, հսկնե էին շարժում թեւերը մինչև հեռուսում մի նաւ նկատեցին, որը իրենց դիմաց էր գալիս: Նաւազարներից մեծը երկու ձեռքերը խողովակածն աշքերին գրեց և սկսեց հետուն նայել:

—Սլիւր է, բայց անտէր քամին, ինչպէս երեսում է, չի թողնում նրանց առաջ գալ. մեզ առաջացնում է: բայց նրանց յետ-յետ է տանում: Խեղճ մարդիկ. ինչ որ իրարանցում էլ կայ, երեի որ և է վտանգ կայ. պէտք է շտավել օգնութեան հասնել:

Եւ տեղից բարձրանալով նաւակի միջից բարձրացող ձողից թոկերը արձակեց, առագաստը բաց արաւ ու փռեց. իսկ քամին առագաստին զարնելով նաւակը արագութեամբ առաջ էր տանում: Բոլորիս աշքերն էլ դէպի այն նաւակն էին ուղղուած: Երբ բաւական մօտեցել էինք, Յակովը, որ զեկի մօտ էր նստած, բացականչեց.

—Նաւակը կոտրուած է. նրանք դոյլով ջուր են գուրս թափում: Եթէ օգնութեան չհասնենք, նրանք կորած են:

Եւ նաւազարները տեկի արագացրին ձեռքերի շարժումները, մինչև որ մօտ հառանք:

Մեծ նաւազարը հետը կացին և տախտակի կտորներ առնելով եկաւ միւս նաւակը: Յակովին էլ դոյլը վերցրեց և անցաւ նաւազարի յետեկից: Մի կողմից ջուրն էին դուրս թափում, միւս կողմից նաւակի ծակերը կարկատում: Մի ժամ տեսց մինչև այդ օրհասական կուրը վերջացաւ, երբ նաւակը ազատ էր: Յոգնած նաւատէրը երախտագիտութեան զգացմոնքը աշքերում նայում էր մերթ Յակովին, մերթ նաւազարին և կամենում էր լաց լինել: Նրա կեանքը փլկուած էր, թէկ մի քանի ջուրալ ալիւր թրջուել փշացել էր:

—Ճնորհակալ իմ, աղբէր ջան, դուք փրկեցիք իմ կեանքը: Եթէ երբ և իցէ պատահենք ուրիշ անդամ, կեանքիս զինն էլ պահանջուի, երախտագիտութիւնս ցոյց կտամ, իսկ եթէ չենք պատահիլ, Աստուած իմ փոխութիւն չնորհակալ կլինի բարի զործի համար:

Մինչ այս, մինչ այն, քամին հանգարատուեց, մենք իջեցրինք մեր առագաստը և դէպի հիւսիս ուղղեցինք թիակները, իսկ փրկուած նաւազարը ջերմօրէն իր ազատիչների ձեռքերը սեղմելով և մնաք բարի ասելով, հակառակ կողմը նաւեց: Անշուշտ երբ և իցէ կըպատահենք իրար, մտածում էինք ամեն մէկս:

Բ.

Ա.փը մօտենում էր կամաց-կամաց: Արդէն երեսում էին այնտեղ բանողները, հերկողներ, ցանողներ, քաղհան անողներ, խոտ հնձողները, պրոնք օրեր, ամիսներ, տարիներ շարունակ բանել էին ու բանում էին, իրենց միապաղապ ու ձանձրալի աշխատանքի մէջ երբէք ոչ մի փսփսութիւն, ոչ մի բարուրում չտեսնելով: Ընդհակառակը, ժամանակը գնալով վատանում էր, նրանք աւելի էին երանի տալիս անցեալին. երեկը այս օրուանից աւելի լաւ էր նրանց աշքում: Հետզհետէ պարզում էր մօտակայ գիւղի պատկերը ու—ցիսալտերի մի անձն ու անկանոն զանդուած, ուր առքում էին այդ սիրոն հողի վրայ աշխատող մարդիկ նիհար: ու դեղնած, մերկ ու ընկճուած: Աւելի

դժբաղները ճանապարհն ի վեր նստած սպասում էին որ և է անցորդի, որին կարողանային ձեռք մելնել «մի հացի փող» կորզել:

Ճանապարհի միւս կողմից լճի և կերպով մի գատարկ կառք էր գալիս: Կառապանն էր միայն, որ անհոգ կերպով բաց էր թողել ձիաների սանձերը և ով գիտէ ինչ մասրմունքի մէջ չէր գիտակցում սրտեղից է գալիս և ուր է գնում: Նա մեծահասակ և լայնոթիկունք մարդ էր, բայց այդ թիկունքն այնքան էր կուցել ուսերի մօտ, որ հեռուից նա մի փոքրիկ տղայի էր նմանում: Այդ մէջքը ցոյց էր տալիս, որ նա շատ ցաւ ու դարդ է տեսել աշխարհում, ուստի և չէր շտապում: ոչ շտապելուց իւէր կայ և ոչ դանդաղելուց շառ: «հաստ ու բարակ մի գին է»:

Երբ մենք ափ իջանք, կառքը հաւասարուել էր մեղ և մենք նրա զիմացն էինք: Մեր աւաշջին հոգին էր գանել ճանապարհը: Եւ իրար հարցնում էինք «Ուր գնանք»:—Այստեղ կառապանը, որ ուղղուել էր կառքում, վրաներս մի սուր հայեցք նեսեց, կարծես հարցնելով, «ինչ ծառայութիւն կարող եմ անել, փոքրիկ աղաներ»:

—Ախպէր, Գօշ ո՞ր կողմովն են գնում, հարցըինք:

—Հրէս է.—ցոյց առւեց նա ճանապարհը ձեռքով լուրջ եղանակով: Համա շատ հեռուն ա: Ոտքով էք գնում:

—Այն, ոտքով ենք ճանապարհորդում:

—Բա խաղէին մարդ էր, խի՞ էք սոտքով ման գալիս: Հրէս արսոյէին, նստէք, մինչև ճանապարհի բաժանման տեղը կտանեմ: մի քանի շահի էլ ձեզնից դէպի մեղ կըքայ:

—Բայց չէ որ արքունական կառք է. միթէ դու կարող ես...

—Դէ, «մասան նորինք» հարկաւոր չէ: Ասում եմ կտանեմ: Զեր ինչ բանն է... չիմա էն ասացէք, ուզում էր նստիլ թէ ոչ:

Այդ բոպէին նա բաւական լուրջ կերպարանք էր ստացել, կտացած մէջքը մի փոքր ուղղուել էր, կոպէրի մէջ կորած աշքերը լայնացել ու փայլել էին սկսել: Մենք ստիպուած էինք կամ մէկ անգամից մերժել և կամ առանց նոյն իսկ գնի մասին խօսելու բարձրանալ ու նստել: Ու վերջինն արինք, երբ նա հրամայական տանով աւելացրեց կտրուկ ու կարճ, կտանալով ու տեղ պատրաստելով իւր ետեռում:

—Նստեցէք:

Մենք նստանք: Բոպէի աղղեցութեան տակ բոլոսս էլ լուռ էինք. լուռ էր և կտառապանը: Տիրող լուռթիւնը խանգարում էր երեսն, երբ կտառապանը մտրակը բարձրացնելով թափ էր տալիս սուր շաշիւն առաջացնում և կամ սուլում երկար՝ հետղինետէ անող սուլուով ձիաների գնացքը արագացնելու համար:

Նորանոր տեսաբաններ էին զալիս ու գնում: բոլորս էլ մտախոն դիտում էինք. թերեւս և հիանում մեր մէջ, սակայն իրար չէինք համարձակում յայտնել տպաւորութիւններս: Վերջապէս կառապանը խօսեց առաջինը, ինչպէս մէկը, որ բարկանալուց յետոյ մեղմանում է, կամենալով քաւել յանցանքը.

—Դոշ ինչո՞ւ էք գնում:

Մենք լուռ էինք:

—Ման զալու ենք գնում.—պատասխանեց Յակովը սառնութեամբ. —Բայց այդ թողնենք, մեր տղայ, ամօթ չինի հարցնելը. քիչ առաջ ինչո՞ւ բարկացար: Թող Աստուած գիտենայ, մենք չէինք նստիլ, բայց հէնց զիտմամբ նստանք, որ տեսնէինք դու ինչ մարդ ես:

—Ո՞նց չրարկանամ, ախպէր ջան: Մի բան, որ դու էլ ես հասկանում, ես էլ եմ լաւ հասկանում, էլ ինչո՞ւ կրկնել տալ: Ջատ լաւ. զնենք թէ գողութիւն եմ անում, և դու հասկանում ես այդ, ախպէր, էլ ինչո՞ւ ես ուզում որ քո առաջդ պարզեմ այդ: Բաւական է, որ ինքս իմ առաջ ամաչում եմ: Ջատ եմ աշխատում չանել, բայց որ չեմ կարողանո՞ւմ:

Այստեղ նա կանգ առաւ, հեռու նայեց, կարծես մաքերը ամփոփելու, սարերից ձորերից բան իմանալու համար այդ մասին, մէկ անգամ էլ սուլեց և մտրակը շարժեց ու բոլորովին մի կողքին անցնելով մեղ լաւ տեսնելու համար, շարունակեց.

—Ահա Գօշ էք գնում, ով գիտէ գործ ունիք էնտեղ թէ չէ: Զեղ պէս շատերին եմ տեսել էս սիրուն սարերն ու ձորերը, էս կանաչ արտերն ու արօաները, հրէն մեր ետեռում էն երկնքի պէս պարզ լիճը ուաքի տակ տալիս, ուրախանում, հիանում, բայց մենք հէնց նոյն այդ գեղեցիկ տեղերում ապրելով, էս սիրուն հողի վրայ մեր կեանքը մի մեծ բեռի նման է թւում մեղ՝ ծանր, անտանելի: Երբեմն նոյն իսկ հացի կարօտ ենք մնում.

—Ինչո՞ւ պիտի կարօտ լինիք, սիրուն հողեր են, ցանեցէք և կտառապարտեցէք, վրայ բերեց Վահանը:

—Հա. ասելը հեշտ է, ախպէր ջան: Այ մի չորս կողմդ նայիր, աղատ մի թիղաչափ էլ է հող չկայ: Սարերի էն խորթ ու փորթ տեղերն են միայն մնացել անասունների կերի համար, մարզը էնքան շատացել է: Էն վաղ էր, երբ մի քանի ընտանիք միասին էին ապրում և էնքան հող կար, որ մէկ տեղը վարում էին, միւսը պահում հկող տարուայ համար: Այժմ հողը քիչ է: Երբ մենք բաժանուեցանք, ինձ մի փոքրիկ կտոր հող ընկաւ միայն. աշխատանքո ոչ ինձ էր հերիք անում և ոչ ընտանիքիս: Թողնեմ, ասայի, երկրագործութիւնը

և թողի. պարտք ունէի, չկարողացայ տալ և հողս պարտապանիս մնաց. երկի որքան ուղի կազմի, մինչև ամսական 6—8 մանէթ նադդ փող կառնեմ և ամեն ինչ պատրաստ կինի:

Սյստեղ Յակովը, որ երկար ժամանակ լուռ ականջ էր դնում մեծ ուշադրութեամբ և երեւն մեղ նայում՝ ստուգելու համար արդեօք հետաքրքրում է մեղ կեանքի դժոյն նկարագիրը թէ ոչ, կտրեց խօսքի թելը:

—Եւ գոհ ես չէ քո այժմեան վիճակից:

—Դէ սպասիր է: Եամշչիկ դարձայ, ինչ, պահանջներս կամաց-կամաց շատացան, տեսայ որ լաւ հագնուսդ եամշչիկները շատ հնաւոգկայ» են ստանում, փող շմնայիցի, լաւ չորեք առայ, երկարավիդ կօշիկներ առայ, տաք վերաբկու առայ: Յետոյ էլ ցուրտը ընկաւ. Էս սարերի ցրտից երեի գուք խարար չէք ունենալ. առանց արազի մարդու թուք ստոչում բողավին է կպչում, թոքերի ծայրերը մրմառում են: Եւ ես ինձ արագին տուի: Հետղհետէ, ինչ մեղքս թագցնեմ, ընտանիքս աչքից ընկաւ—կամ եղած կամ չէ: Այ, մինչև էս առաջիկայ գիւղում ջանս չհանգստացնեմ, չեմ կարող առաջ գնալ. մասնաւնդ էնակեղ մի ոքմին էլ կայ...: Հէյ աշխարք, նա էլ մի կողմից է դարդերս շատացնում: Փող շատ է պէտք, ախպէք ջան, շատ: Եւ երբ այդպիսի թեթև գորութիմներ անեմ, հիմա գուք կամէք մեղք է...

Սաց երկար զէմքերիս նայեց և իւր անակնկալ հարցին պատասխան չստանալով երեսը դէպի ձիանքը դարձրեց:

—Հիւ, հիւ, սուլեց, մտրակը շարժեց և դնացք արագացրեց:

#### Գ.

Գիւղից դէպի մեղ երկու ձիաւոր էին գալիս շատ լնթացքով: Առաջինը մի կալմքերս բարձրահասակ տղոմարդ էր հաստ-հաստ բեկերով, երկար կօշիկները մինչի ծկները քաշած, իսկ երկրորդը, որ նրա ետերցն էր գալիս, մի նիհար երիտասարդ էր փոքրիկ աչքերով ու տափակաւուն քթով. ըստ երեսյթին առաջինը տէրն էր, իսկ երկրորդը ծառան: Մեր կառապանը վաղուց էր նկատել եկողներին և հետաքրքրութեամբ դիտում էր նրանց՝ իմանալու համար թէ ովքեր են: Երբ նրանք տեսի մօտեցան և դէմքերը պարզուելու վրայ էին, կառապանը արագութեամբ երեսը շուռ տուեց դէպի մեղ և աչքերն այս ու այն կողմ պարտցնելով կարծես փախտեան տեղ էր որոնում ու տեղ չգտնելով, յանցանքի մէջ բռնուածի նման մնաց ստառած: Մի բոպէ տեսից այդ գրաւթիւնը, որից յետոյ կարծես սիրտ առած նա տեղում ուղղուեց, աշխատելով բարձր պահել գլուխը

և ուղիղ՝ թիկունքը, մինչև որ ձիաւորները կառքին հաւասարուելով կանգ առան: Նրանցից մեծը մի վայրկեան լուռ կառապանի աշքերի մէջը նայելուց յետոյ գոռաց:

—Տօ, շուն շան որդի, էն օրը շասացիր որ վազը փողը կը բերես, տօ բաս դու նամուռ շունիս:

—Տես, Սերգո աղա, մինչև այժմ լուել եմ, այսուհետեւ շեմ լուելու, մինչև կոլորդս հասցըիր, բաւական է: —Սյստեղ մեղ նայելով և մեր աշքերի մէջ արհամարհանք նկատելով դէպի աղան, աւելացրեց կառապանը: —Չուն էլ ես, շան որդի էլ: Հարիւր անգամ միւնոյն պարտքը տուել եմ, էլի տամ: Արսու էլ պարտքի փոխարէն վարում ես, կնիկս էլ պարտքի փոխարէն շարաթուայ մեծ մասը տանդ բանեցնում ես, ձեռքս ընկած շահի բիստին էլ բերում քեզ եմ տալիս, մնաստուած, բաս այսքանը բաւական չէ, էլի տամ:

—Ում մօտ տուիր, ինչ թղթով տուիր, հառամգաղայ:

—Ինձ հառամգաղայ շնիցիր, Սերգօ, ինձ... չա ես քո...—

—Սաց ու կառքից վայր իջաւ, վրայ վաղեց և երկան մտրակով մէկ-երկու զարկում էր Սերգօյի իրեսին ու գլխին: Էլ սպասելու տեղը չէր: Սերգօն ասպանդակոց ձիուն և տրագ հեռացաւ, սպաննալիքներ կարդալով:

—Էյ, վատասիրտ աղուէս. այդ գեռ ոչինչ, ձեռքիցս հեշտ պրծար. հաւաքուած թոյնը դեռ յետոյ պիտի ճաշակես ձեռքիցս: Աստուծով շուտով իրար կպատահենք, —կանչեց կառապանը նրա ետիկից:

Սիրտը հովացրած նա կրկին եկաւ, կառքը բարձրացաւ ու նստեց և այս անգամ շատ արագ ձիաները քշելով հասաւ գիւղ ու կանգ առաւ խանութի առջև: Նա մտաւ խանութի, իսկ մենք գնացինք գիւղը գիւղը, մինչև կառապանը վերջացնէր իւր գործը խանութում:

#### Դ.

Գիւղից դուրս էինք եկել և բարձրացել լեռան գլուխը, որտեղից ճանապարհը ոլոր-մոլոր պայուտներով իջնում էր ցած: Ներքեսում էր ցած: Նոսում էր գետակը իւր անարկու վշշոցով: Մերթ նա սողում էր ժայռերի տակով թագցնելով փրփուրը մացաների ետևում կծկուած, մերթ ցոյց էր տալիս իւր փրփուրէզ մէջքը արհամարհելով երկու կողմից բարձրացած հսկայական լանջերը: Մենք լուռ էինք. բնութեան բաղմազան տեսարանները դարձեալ գրաւել էին մեղ և վերացրել կեանքից: Եթէ առաջներիս կառապանը, կեանքի այդ ողորմելի կտորը չինէր, մենք երեի չէնք էլ գիտենալ, որ երկրի երեսին ենք, ուր փոքր ինչ առաջ թոյլի և զօրեղի հզօր պայքարն էր

մղում մեր դիմաց: Կառապանն էլ լուռ էր. երկի մտքում կուռում էր Սերգոյի հետ, կամ հարներ էր որոնում ազատուելու մի կերպ, եթէ դատարան քաշ տան և կամ գուցէ մի այլ աւելի ծանր, աւելի խոռվեցուցիչ բանի համար էր մտածում:

— Զես խօսում, Մարգար, դարձաւ Յակովը կառապանին:

— Հէջ մարդու դարդ հարցնում էր, որ խօսեմ: Այսքան ժամանակ է էս ճանապարհով գնում եմ, եօթ ութ ամիս կլինի, յետ ու առաջ, առաջ ու հետ, մէկը իմ դարդը չհարցրեց: Զեղ էլ ինչ ասացի, չիմացայ ինչպէս ասացի, սիրտս գրոհ էր տալիս, որ գուրս թռչի իւր ողորմելի բնից, գուցէ շանչախի հման ձեր գլուխն էլ ցաւացրի.

— Գիտենք էլի, ասաց Վահանը ընկճուած.— էն ով դարդ չունի. բուրս էլ դարդի ու ցաւ գերիներ ենք:

— Եզդէս չի, իմ ախպէրքս, իմ աղէքս: Երանի էն մարդուն, որ իր օջախից հեռու չի ապրիլ: Մինչև այժմ էլ յիշում եմ, թէ ինչպէս յոգնած ժամանակս արտը հնձելիս կամ կալը կալսելիս կնիկս տաք թանափուը կամ սառն մածնեփրթուշը բերում էր ու հովացնում սիրտս, ոյժ տալիս մարմնիս—քթիս ծուխը քուլաքուլայ վեր է ել-նում: Աստուած է վկայ, դէսք է պատահել, երբ ուզեցել եմ ես քարափից ցած քցել ինձ և ջարդուած ջանս ժայռերի ծերպերին ու էդ գետի փրփուրին տալ: Տես, ախպէր ջան. էս կողմերը խիստ ցուրտ է լինում: Երեմն մարդու էնպէս մի «սանջու» է բռնում, որ ուզում է միջից ծալուի. ասում ես. «հայ գիդի տունդ մօտիկ լինէր, գնայիր Աստուծու տուածից մի աման տաք կերակուր ուտէիր, կինդ քրտնեցնէր քեզ և ետ բերէր». բայց ուր, մտածում ես. «Դէ էսպէս է, էսպէս, հէնց միանգամից էդ խոր ձորը ձգիր քեզ ու պրծիր էլի»: Տեսէք, ախպէր, հրէն էնտեղ ճանապարհներս ջոկւում է, ամեն բան ձեզ պարզն ասեմ և բաժանուենք, գուցէ էլ իրար չենք պատահելու: Ես որ իմ հայրական արհեստից բաժանուած շլնէի, էս խաթէն իմ գլուխս չէր գալ: Ի՞նչ թագցնեմ. էդ գիւղում,—ձեռքով ետեւը ցոյց տալով ասաց կառապանը, — հէնց էն խանութիւմ մի կին կայ, խանութպանի կինը: Քանի անգամ ցրտից փէտացած մտել եմ, քանի անգամ սանջուն կողքս ըւնած ներս եմ խծկուել, քուր պէս խնամել է ինձ, օգնել, ուտեցրել, սաղացրել: Բայց, հեռի մեղանից, մարդս գազան է, էն էլ ամենակատաղի գազանը, փոխանակ քուոր պէս սիրելու, ուրիշ աշքով ուկսեցի նայել վրան: Եւ այդ մէկ անգամ, երկու անգամ, երեք անգամ չէր կրկնուում: Նա կարող էր հէնց առաջին անգամից իմ սանձը քաշել. բայց չքաշեց, ամեն անգամ բաւականանում էր կարմբելով ու խուսափելով: Մոռացայ կին, երեխայ և ամբողջապէս էդ կնոջը

տուի ինձ: Հիմա ամեն անգամ էս զիւղավն անցնելիս մինչև էդ խանութը չմտնեմ, չեմ կարսդ առաջ զնալ: Խոկ փողիս բարաքեաթ չկայ, ուզում եմ երկար նստել խանութում և ստիպուած եմ փող շատ խարջել: Դէ հիմա բանն էսպէսա,— երեխորցս և կնոջս մոռանում եմ, էն խեղն կնոջը ուզում եմ զլիսից տանել, էս անտէր պարապմունջս էլ ինձ հետղնետէ փշացնում է. օրուայ ստացածը օրը ուտում, ամսուայ ստացածը ամսում փշացնում եմ. էդ անաստուած մարդիկն էլ միւս կողմից են հոգիս հանում: Էս բոլորից պրծում չկայ: Ես իմ հողը, մի թիզաչափ էլ լինէր այն, չպէտք է թողնէի. չար մարդկանց վիզը կոտրուի... բայց որ թողել եմ, օրալարձով և ամսավճարով ապրողը շեմ: Վճռել եմ հեռանալ այստեղից... Կամ բոլորովին կընկնեմ, կամ յաղթող գուրս կպամ: Թէ չէ էսօր էս քեօխի ձեռքում, էգուց էն համփի ճանկերում, միւս օրը մի անաստուած վաշխառուի ձեռքում, ով գիտէ զեռ գատաստան էլ քաշ կըտան, իրենց արդար գուրս կըերեն և քեզ պատժել տան: Էնպէս պէտք է անել, որ մինք նրանց զատաստան կանչենք և այն էլ հասարակ գատաստան չինի...»

Հասանք ճանապարհի բաժանման տեղին:

Մարգարը անակնկալ կերպով մեղմացաւ զլիսարկը հանեց, վլուխը խոնարհեց ու ողջունեց:

— Դէ բարի ճանապարհ, աղպէրներս, գուցէ էլի կպատահենք: Եթէ մի վատ բան արել եմ, կներէք: Ճանապարհ շատ կայ, այժմ ուր ուզում էք գնացէք:

— Գնաս բարով, Մարգար, յաջողութիւն: Առ այս արծաթն է մեղ այստեղ հասցնելուք համար:


— Եթէ իմ նոր ճանապարհը սիրում էր, յետ վերցրէր այդ փողը: Քիչ առաջ ուզում էի ձեզ հետ խօսել զնի մասին յետոյ նստեցնել, բայց այժմ շատ բան անցել է ինձ համար, նոր ճանապարհի եմ այժմ:

Ճանապարհներս շաբունակելով մինք իրար ետկից-Մարգարը դէպի մեղ, մինք դէպի Մարգարը, հետղնետէ հեռանալով իրարից, մինչև որ կառքը լեռան ետեն անցաւ: Մենք մաքերի մէջ խորասուգուած շարունակում էինք մեր նոր ճանապարհը, բայց ոչ դէպի Գօշ:

Մարգարի ճանապարհն էլ լեռան միւս կողմում նոր էր, գոնէ նորի սկիզբը:







25.549

897.99  
4-65